



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից



Անձնական խնամողի և ատամնատեխնիկական հմտությունների բացերի վերլուծություն և առաջարկություններ

Project 101128630



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Փաստաթղթերի վերահսկման տեղեկատվություն

Կարգավորումներ	Գնահատում
Փաստաթղթի անվանումը	Ատամնատեխնիկի և անձնական խնամողի հմտությունների բացերի վերլուծություն և առաջարկություններ
Նկարագրություն	Փաստաթուղթն ամփոփում է Հայաստանյան ընկերությունների վերահսկման կարիքները և ՄԿՈՒ ծրագրերը, շեշտադրելով հմտությունների և սարքավորումների առումով բացը: Բնօրինակի լեզուն՝ անգլերեն :
Փաստաթղթի հեղինակ	SEPR և APRO Formazione
Առաջադրանք	D 2.1 Ատամնատեխնիկական և առողջապահության ոլորտի հմտությունների բացերի վերլուծություն և առաջարկություններ T2.1 Ուսումնական այցեր և խորքային վերլուծություն՝ հայտնաբերելու ընկերությունների կարիքները ատամնատեխնիկական և առողջապահության ոլորտներում T2.2 ՄԿՈՒ ծրագրերի ընթացիկ վիճակը Հայաստանում և բենչմարկինգ եվրոպական շրջանակի հետ
Աշխատանքային փաթեթ	WP2
Գաղտնիության աստիճանը	Հանրային
Ամսաթիվ	08/05/2024

Փաստաթղթի պատմություն

Փաստաթղթի հեղինակն իրավասու է փաստաթղթում կատարել հետևյալ տեսակի փոփոխությունները՝ չպահանջելով, որ փաստաթուղթը վերահաստատվի.

- **Խմբագրում, տառաչափի և ուղղագրական շտկումներ**
- **Պարզաբանում**

Այս փաստաթղթի փոփոխության անհրաժեշտության դեպքում դիմել փաստաթղթի հեղինակին կամ սեփականատիրոջը:



**Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից**

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Այս փաստաթղթի փոփոխություններն ամփոփված են հետևյալ աղյուսակում՝ հակառակ ժամանակագրական հաջորդականությամբ (նախ վերջին տարբերակը):

Վերանայում	Ամսաթիվ	Ստեղծվել է (ում կողմից)	Փոփոխությունների համառոտ նկարագրություն
Տարբերակ 1	22/05/2024	SEPR APRO Formazione	Առաջին նախագծի տարբերակը ներկայացվել է կոնսորցիումի հետադարձ կապի ապահովման համար
Տարբերակ 2	03/06/2024	SEPR	Չեկույցի երկրորդ տարբերակը՝ ստեղծվել է վերոնշյալ հետադարձ կապի հիման վրա:
Տարբերակ 3	17/06/2024	CEPFA SEPR	Չեկույցի վերանայված տարբերակը, որպես հիմք ընդունելու է հետադարձ կապը :
Տարբերակ 3	22/07/2024	SEPR	Չեկույցի վերանայված տարբերակը, որպես հիմք ընդունել են ԿՉԱԿ հիմնադրամի ՄԿՈՒՉԱԿ հիմնարկի կարծիքը
Վերջնական տարբերակ	26/07/2024	SEPR	Վերջնական տարբերակը կներկայացվի



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Բովանդակություն

Գծապատկերի ցանկ	6
Աղյուսակների ցանկ	6
1. ԱՄՓՈՓՈՒՄ	7
1.1 Փաստաթղթի նպատակը	7
1.2 Հաշվետվության կառուցվածքը	7
1.3 Մեթոդական մոտեցում	7
1.3.1 Հարցաթերթիկների ընդհանուր ուրվագիծ	8
➤ ՄԿՈՒ հաստատությունների ստուգաթերթ՝ ատամնատեխնիկական գործ	9
➤ ՄԿՈՒ հաստատությունների ստուգաթերթ՝ առողջապահական խնամք և անձնական խնամող	9
1.3.2 Ֆոկուս խմբերի ընդհանուր ուրվագիծ	10
2. ՆԱԽԱԳԾԻ ԱՄՓՈՓՈՒՄ	11
3. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՔՍ	14
3.1 Հայաստանի ՄԿՈՒ ազգային համակարգի ակնարկ	14
3.1.1 Նախապատմություն և ընթացիկ համատեքստ	14
3.1.2 ՄԿՈՒ-ի հիմնական տարրերը որակավորման ազգային շրջանակում	14
3.1.3 ՄԿՈՒ հաստատությունների վերահսկում	16
3.1.4 ՄԿՈՒ շարունակական կրթության և քաղաքականության ուղղությունները	17
3.1.5 ՄԿՈՒ կառավարում և համակարգում	18
3.1.6 Կառավարում և ինքնավարություն	19
3.1.7 Որակի ապահովում	20
4. Դպրոցի/ՄԿՈՒ կենտրոնի համառոտ ներկայացում	21
4.1 «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» (CEPFA)	21
4.2 GSMC - Գյումրու պետական բժշկական քոլեջ	22
5. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ՝ ԱՏԱՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾ	23
5.1. ՄԿՈՒ հաստատություններ և ընդունելություն	23
5.2. Ուսման վարձը և տնողությունը	23
5.3. Կառուցվածքը և ուսումնական պլանը	23



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

5.3.1 CEPFA-ի մանրամասն ուսումնական պլանի օրինակ	24
5.3.2. Ծրագրի կառուցվածքը	24
5.4. Պրակտիկա և դասավանդում	24
5.5. Սարքավորումներ և հարմարություններ	25
5.6. Շուկայի կարիքները և ուսումնական պլանի համապատասխանեցումը	25
5.7. Մասնագիտական կապեր և իրական ուսուցում	26
5.8. Սեռերի հարաբերակցությունը և զինվորական ծառայության ազդեցությունը	26
5.9. Գործատուի մարտահրավերները	27
5.10. Սարքավորումներ և տեխնոլոգիաներ	28
5.11. Թվային ուսուցման հզորացման անհրաժեշտություն	28
5.12. Աշխատավարձ և աշխատանքային պայմաններ	28
5.13. Հեռանկարներ և հնարավորություններ	29
6. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ՝ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԱՄՔ	29
6.1 Հարցաշարերի ստուգաթերթերի հիմնական եզրակացությունները	30
6.2 Հարցազրույցների հիմնական բացահայտումները	31
6.3 Ֆոկուս խմբային քննարկումների արդյունքները	34
7. SWOT վերլուծություն	37
8. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՏԱՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾ	38
9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԱՄՔ	40
9.1 Արժեքային մոդելի հիմքը - Առողջապահական համակարգ	40
9.2 Առողջապահություն որոշ առաջարկություններ	41
9.3 Հիվանդակենտրոն խնամքի մոդելներ	42
9.4 Առաջարկվող թեմաներ և մոդուլներ	45
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	52
Հղումներ	53



Գծապատկերի ցանկ

Գծապատկեր 1. IMPROVET-AM գործընկեր երկրների քարտեզ

Գծապատկեր 2. Որակավորումների ազգային շրջանակը Հայաստանում: Աղբյուրը՝
ԹՈՒՐԻՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ. Հայաստանում շարունակական կրթության
քաղաքականության ակնարկ

Գծապատկեր 3. Կրթական համակարգը Հայաստանում: Աղբյուր՝ ETF, 2020թ

Գծապատկեր 4. Վերջին հինգ տարվա ատամնատեխնիկի վերապատրաստման
դասընթացների պահանջարկը. ՄԿՈՒ հաստատություններին ուղղված հարցաշար

Գծապատկեր 5. 2024թ-ի տղաների/աղջիկների հարաբերակցությունը հարցվողների
հաստատություններում - ՄԿՈՒ հաստատություններին ուղղված հարցաշար

Գծապատկեր 6. Գործատուների բավարարվածության աստիճանը շրջանավարտների
հմտություններից – գործատուներին ուղղված հարցաշար

Գծապատկեր 7. Պահանջվող թվային հմտություններ ունեցող թեկնածուներին գտնելու
դժվարություն- գործատուներին ուղղված հարցաշար

Գծապատկեր 8. Բացահայտումների և տվյալների ամփոփիչ SWOT վերլուծության

Գծապատկեր 9. Արժեքի մոդելի հիմքը - Առողջապահական համակարգ

Գծապատկեր 10. Հիվանդակենտրոն խնամքի առաջնային դրույթները

Գծապատկեր 11. Հիվանդակենտրոն խնամք- Հաստատություններ

Գծապատկեր 12. Հիվանդակենտրոն խնամք- Մարդկանց հետ

Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1. Առաջարկվող թեմաներ և մոդուլներ

Աղյուսակ 2. Ուսուցման կազմակերպում

Աղյուսակ 3. Առաջարկվող տարբերակներ՝ Տարբերակ 1 և Տարբերակ 2



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված
տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն
հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական
միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր
գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ
EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

1. ԱՄՓՈՓՈՒՄ

1.1 Փաստաթղթի նպատակը

Սույն գեկույցի նպատակը Հայաստանի մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ծրագրերում ուսուցանվող հմտությունների բացերի համապարփակ վերլուծությունն է, մասնավորապես, ատամնատեխնիկության, ինչպես նաև առողջապահական խնամքի ու անձնական խնամողի կրթական ծրագրերում: Այս վերլուծության նպատակն է տեղեկացնել վերապատրաստման մոդուլների մշակման և կատարելագործման մասին ինչպես միջին մասնագիտական, այնպես էլ շարունակական կրթություն ստացող ատամնատեխնիկների համար, և շարունակական կրթություն ստացող անձնական խնամողի համար: Նպատակն է համապատասխանեցնել միջին մասնագիտական կրթությունը թիրախային ոլորտների ներկա և ապագա կարիքներին՝ ներառելով թվային և կանաչ տեխնոլոգիաները, որոնք կբարձրացնեն աշխատուժի որակավորումն ու կարողությունները: Աշխատանքային 2-րդ փաթեթի շրջանակներում սույն փաստաթուղթը իրականացվող ավելի լայն ջանքերի մի մասն է կազմում՝ Հայաստանում Նորարարական վերապատրաստման մոդուլների ստեղծման միջոցով առողջապահության ոլորտի զարգացմանն աջակցելու նպատակով:

1.2 Հաշվետվության կառուցվածքը

Ձեկույցը կազմված է երեք հիմնական թեմատիկ բաժիններից. Բաժին 1-ը մանրամասն նախապատմություն և համատեքստային տեղեկատվություն է տրամադրում ծրագրի մասին, Հայաստանի ՄԿՈՒ համակարգի ակնարկ և ներգրավված դպրոցների/ՄԿՈՒ կենտրոնների համառոտ ներկայացում: Բաժին 2-ում ներկայացված են գրականության ուսումնասիրության, հարցաթերթիկների, հարցազրույցների, տեղում կատարված այցելությունների և ֆոկլուս խմբային քննարկումների արդյունքում ստացված հիմնական բացահայտումները: Վերջին գլուխը՝ Բաժին 3, առաջարկում է եզրակացություններ և առաջարկություններ, որոնք ուղղված են տեղեկացնելու Նոր և Նորարարական վերապատրաստման մոդուլների մշակմանը մասին ինչպես միջին մասնագիտական, այնպես էլ շարունակական կրթություն ստացող ատամնատեխնիկների համար, և շարունակական կրթություն ստացող անձնական խնամողի համար:



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

1.3 Մեթոդական մոտեցում

Սույն զեկույցը որդեգրում է բազմամեթոդ մոտեցում՝ ներառելով Հայաստանին և երկրի ՄԿՈՒ համակարգին առնչվող փաստաթղթերի ամփոփ նկարագիրը՝ հատուկ ուշադրություն դարձնելով թիրախային ոլորտներին: Առաջնային տվյալների հավաքագրման համար մշակվել են մասնավոր հատվածին (ընկերություններին/հիվանդանոցներին), ՄԿՈՒ կենտրոններին և համապատասխան շահագրգիռ կողմերին (ՄԿՈՒ քաղաքականություն մշակողներին) ուղղված հարցաթերթիկներ: Այդ հարցաթերթիկները բաշխվել են նախքան պլանավորված ճանաչողական այցը և ուսումնասիրության առաքելությունը: Ծրագրի գործընկերների հետ համատեղ մշակվել է քայլերի պլանավորում ուրվագծելու ուսումնասիրության ժամանակացույցը և հիմնական փուլերը, ինչը ներկայացված է Հավելված 8-ում:

2024 թվականի մարտի 18-22-ին իրականացվել է դաշտի ուսումնասիրություն, որը հնարավորություն է տվել հավաքագրել լրացուցիչ տվյալներ, որոնք օգնել են վերահաստատել կամ վերանայել նախնական բացահայտումները, որոնք ստացվել են գրականության ուսումնասիրությունից և հարցաշարի պատասխաններից: Այս փուլը ներառում էր ճանաչողական այցելություններ և ֆոկուս խմբերի քննարկումներ համապատասխան շահագրգիռ կողմերի հետ, ինչպես նաև հարցազրույցներ՝ ոլորտին առնչվող խնդիրները խորքային ուսումնասիրելու համար:

Հետագայում, բացահայտումները համեմատվել են եվրոպական շրջանակի հետ՝ համահունչությունն ու համապատասխանությունը ապահովելու նպատակով: Հավաքագրված բացահայտումները այնուհետև ներառվել են սույն զեկույցում («Ատամնատեխնիկական հմտությունների բացերի վերլուծություն և առաջարկություններ»): Այս փաստաթուղթը ներկայացվել է ծրագրի բոլոր գործընկերներին, այդ թվում՝ ծրագրի ասոցացված գործընկերներին՝ Հայաստանի ԿԳՄՍ և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններին, առաջարկություններին համապատասխանեցնելու և ակնկալվող վերապատրաստման մոդուլների շրջանակը սահմանելու համար:

1.3.1 Հարցաթերթիկների ընդհանուր ուրվագիծ

ՄԿՈՒ կենտրոնների, մասնավոր հատվածի/հիվանդանոցների և համապատասխան շահագրգիռ կողմերի (ՄԿՈՒ քաղաքականություն մշակողների) համար պատրաստվել և բաշխվել են հարցաթերթիկներ՝ նախքան ճանաչողական այցը և ուսումնասիրության առաքելությունը: Հարցաթերթիկները ներառել են թիրախային ոլորտին և կարիերայի ուղղորդմանը վերաբերող հարցերը:

Հարցաթերթիկները կազմվել են 2024 թվականի փետրվարին՝ 2024 թվականի մարտին տեղի ունեցած ճանաչողական այցից և նախնական առաքելությունից առաջ: Տրամադրված տեղեկատվությունը ստուգվել է ճանաչողական այցերի (հիվանդանոցներ, ատամնաբուժարաններ, ընկերություններ և այլն) և ֆոկուս խմբային հանդիպումների ընթացքում:



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Հարցաթերթիկների նպատակն էր ստանալ հիմնական տեղեկատվություն Հայաստանի մասնավոր հատվածից/հիվանդանոցներից և համապատասխան շահագրգիռ կողմերից, այդ թվում՝ երկու հայկական գործընկեր ՄԿՈՒ կենտրոններից, ծրագրի գործընկեր ՀՈՎԱԿԻՄՅԱՆ Լաբ լաբորատորիայից և ծրագրի ասոցացված գործընկերներից՝ ՀՀ ԿԳՄՍ և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններից: Տեղեկատվությունը հիմք է հանդիսացել ապագա վերլուծության և վերապատրաստման նոր մոդուլների մշակման համար:

Մանրամասն հարցաթերթիկները և լրացված ձևերը կցված են սույն փաստաթղթին՝ Հավելված 1, 2, 3:

➤ **ՄԿՈՒ հաստատությունների ստուգաթերթ՝ ատամնատեխնիկական գործ**

Հարցաշարը բաղկացած է եղել 81 հարցից և բաժանված հետևյալ բաժինների.

- ՏԱՐԻՔ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ
- ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ
- ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ
- ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
- ՔԱՆԱԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Ընդհանուր առմամբ, մենք ստացել ենք 6 պատասխան 6 ՄԿՈՒ հաստատություններից Հայաստանի տարբեր մարզերից, այդ թվում՝ Լոռիից, Ծիրակից, Սյունիքից և մայրաքաղաք Երևանից:

➤ **ՄԿՈՒ հաստատությունների ստուգաթերթ՝ առողջապահական խնամք և անձնական խնամող**

Հարցաշարը բաղկացած է եղել 82 հարցից և բաժանված հետևյալ բաժինների.

- ՏԱՐԻՔ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ
- ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ
- ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ
- ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
- ՔԱՆԱԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Ընդհանուր առմամբ, մենք ստացել ենք 5 պատասխան 5 ՄԿՈՒ հաստատություններից Հայաստանի տարբեր մարզերից, այդ թվում՝ Լոռիից, Ծիրակից, Սյունիքից և մայրաքաղաք Երևանից:

➤ **Մասնավոր հատվածի/հիվանդանոցների հարցաթերթը՝ ատամնատեխնիկական գործ**

Հարցաշարը բաղկացած է եղել 32 հարցից: Ընդհանուր առմամբ ստացել ենք 7 պատասխան Գյումրիի և Երևանի տարբեր ատամնաբուժարաններից, ընկերություններից:



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

➤ **Մասնավոր հատվածի/հիվանդանոցների հարցաթերթը՝
առողջապահական խնամք և անձնական խնամող**

Հարցաշարը բաղկացած է եղել 35 հարցից: Ընդհանուր առմամբ ստացել ենք 4 պատասխան տարբեր խնամքի և բժշկական կենտրոններից, ընկերություններից և այլն:

➤ **Հարցաթերթիկ շահագրգիռ կողմերի համար՝ ատամնատեխնիկական
գործ**

Հարցաթերթիկը բաղկացած է եղել 33 հարցից: Ընդհանուր առմամբ մենք ստացել ենք 4 պատասխան տարբեր քաղաքականություն մշակողներից:

➤ **Հարցաթերթիկ շահագրգիռ կողմերի համար՝ առողջապահական խնամք
և անձնական խնամող**

Հարցաթերթիկը բաղկացած է եղել 25 հարցից: Ընդհանուր առմամբ մենք ստացել ենք 2 պատասխան տարբեր քաղաքականություն մշակողներից:

1.3.2 Ֆոկուս խմբերի ընդհանուր ուրվագիծ

Կարողությունների զարգացման գործիքակազմը մշակվել է վերը նշված հիմնական շահագրգիռ կողմերի՝ մասնավոր հատվածի/հիվանդանոցների, ՄԿՈՒ կենտրոնների և պետական մարմինների կարծիքներն ու տեսակետները վերլուծելու նպատակով: Հայաստան կատարած ճանաչողական այցի և ուսումնասիրության առաքելության ընթացքում շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ հրավիրվել են միանալու ֆոկուս խմբերի հանդիպումներին SEPR և APRO Formazione-ի աշխատակիցների հետ: Մասնակիցներն ազատ են եղել արտահայտելու իրենց գաղափարներն ու տեսակետները՝ խթանելով Հայաստանում թիրախային ոլորտի և ՄԿՈՒ քաղաքականության շուրջ քննարկումներն ու բանավեճերը:

Ֆոկուս խմբերի մանրամասն գործիքակազմը ներկայացված է Հավելված 4,5,6-ում:

➤ **Ֆոկուս խումբ շահագրգիռ կողմերի հետ 18.03.2024թ**

5 ներկայացուցիչներ՝ ՀՀ ԿԳՄՍ և ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններից, ՄԿՈՒ-2ԱԿ-ից:

➤ **Ֆոկուս խումբ ՄԿՈՒ հաստատությունների հետ**

Ծրագրի յուրաքանչյուր ոսումնական կենտրոնի համար կազմակերպվել է 2 ֆոկուս խումբ՝ CEPFA Երևանում և GSMC՝ Գյումրիում: 19.03.2024թ.-ին անցկացվել է ֆոկուս խմբային հանդիպում CEPFA-ի հետ՝ 10 ներկայացուցիչներով, 20.03.2024թ.-ին՝ GSMC-ի հետ՝ 9 ներկայացուցիչներով:

➤ **Ֆոկուս խմբեր մասնավոր հատվածի/հիվանդանոցների հետ**



**Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմի**

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Մասնավոր հատվածի համար կազմակերպվել է 2 ֆուլուս խումբ՝ մեկը Գյումրիում, որն անցկացվել է 21.03.2024թ.-ին 6 ներկայացուցիչներով և մյուսը՝ Երևանում՝ 22.03.2024թ.՝ տարբեր ատամնաբուժական կլինիկաների և ընկերությունների հետ: Բոլոր մասնակիցները իրենց ոլորտում առաջատար են:

2. ՆԱԽԱԳԾԻ ԱՄՓՈՓՈՒՄ

IMPROVET-AM (IMProve and PROmote Vocational Education and Training in Armenia) ծրագրի հապավումը բացվում է հետևյալ կերպ՝ «Բարելավել և զարգացնել մասնագիտական կրթությունը ու ուսուցումը Հայաստանում»: IMPROVET-AM Եվրոպական ERASMUS+ կարողությունների զարգացման ծրագիր է, որում ներգրավված են 3 երկրներ՝ Ֆրանսիան, Իտալիան և Հայաստանը և 5 գործընկերներ:

1. **SEPR.** Ծրագրի համակարգող. Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) հաստատություն, որը գտնվում է Լիոնում, Ֆրանսիա:
2. **APRO Formazione.** ՄԿՈՒ հաստատություն, որը գտնվում է Ալբա քաղաքում, Իտալիա:
3. **CEPFA.** ՄԿՈՒ հաստատություն, որը գտնվում է Երևանում, Հայաստան:
4. **GMSC.** ՄԿՈՒ հաստատություն, որը գտնվում է Գյումրիում, Հայաստան:

Բացի լիարժեք գործընկերներից, նախագիծը ներառում է անդամ կազմակերպություն.

ՀՈՎԱԿԻՄՅԱՆԼԱՐ. Ատամների պրոթեզավորման ոլորտում մասնագիտացած հայկական ընկերություն, որը ներկայացնում է մասնավոր հատվածը: ՀՈՎԱԿԻՄՅԱՆԼԱՐ-ը առանցքային դեր է խաղում ոլորտի կարիքների համակողմանի ընկալման համար:


Ավելին, չորս խոշոր հաստատություններ ցուցաբերել են հետաքրքրություն և աջակցություն՝ դառնալով ասոցացված գործընկերներ.

- **Օվերն-Ռոն-Ալպեր շրջան,**
- **Պիեմոնտի շրջան,**
- **Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն,**
- **Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:**



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:



Նկար 1 IMPROVET-AM գործընկեր երկրների քարտեզ

IMPROVET-AM-ը նպատակային նախաձեռնություն է, որն ուղղված է Հայաստանի առողջապահության ոլորտում որակավորումների բարելավմանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ատամնատեխնիկական և առողջապահական խնամքի ու անձնական խնամողի հմտություններին: Այն ձգտում է նպաստել հայ սովորողների, ընտանիքների և հանրության մասնագիտական ուղղորդման զարգացմանը: Սահմանվել են հիմնական նպատակներ ծրագիրը իրագործելու համար:

- ✓ Ամրապնդել համագործակցությունը ՄԿՈՒ հաստատությունների և ընկերությունների միջև, ինչը կապահովի երկուստեք արդյունավետ աշխատանքը,
- ✓ Բարելավել հայ սովորողների ինտեգրումը աշխատաշուկային՝ գործատուների կարիքներին համահնչեցնելով ՄԿՈՒ ծրագրերը
- ✓ Աջակցել Հայաստանում Առողջապահության ոլորտի, հատկապես ատամնատեխնիկի և առողջապահական խնամքի ու անձնական օգնականի հմտությունների զարգացմանը՝ բարելավելով որակավորումները և ներառելով թվային և կանաչ կրթությունը,
- ✓ Որակյալ միջին մասնագիտական և շարունակական կրթությունը հասանելի դարձնել բոլոր, նույնիսկ հեռավոր և գյուղական շրջանների հայ սովորողների համար, ապահովելով՝ նրանց ցկյանս կրթությունը,
- ✓ Բարելավել մասնագիտական ուղղորդումը հայ սովորողների, ընտանիքների և լայն հանրության համար:

Մանրամասն վերլուծության միջոցով IMPROVET-AM-ը ջանք է գործադրում վերհանելու՝ ընկերությունների կարիքները և գնահատելու Հայաստանում ՄԿՈՒ առկա ծրագրեր՝ ատամնատեխնիկության և առողջապահական խնամքի ու անձնական խնամողի ոլորտներում: Հետագայում, եվրոպական շրջանակի հետ



**Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմի**

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

համեմատությունը կուղղորդի վերապատրաստման նոր մոդուլների մշակմանը, ինչպես միջին մասնագիտական, այնպես էլ շարունակական կրթությունը ստացող ատամնատեխնիկների համար և շարունակական կրթությունը ստացող անձնական խնամողի համար:

Ծրագրի հիմնական գործողությունները ներառում են.

➤ **Նորարարական վերապատրաստման մոդուլների ստեղծում**

Նոր և նորարարական վերապատրաստման մոդուլների ինչպես միջին մասնագիտական, այնպես էլ շարունակական կրթությունը ստացող ատամնատեխնիկների համար, և շարունակական կրթությունը ստացող անձնական խնամողի համար:

➤ **Ուսումնական մոտեցումների իրականացում**

Նոր ուսումնական նյութերի և ուսումնական մոտեցումների, թվային գործիքների ինտեգրում, այդ փորձի շարունակականություն:

➤ **Կարողությունների զարգացում**

Դասավանդողների և դեկավար անձնակազմի և քաղաքականություն մշակողների կարողությունների հզորացում՝ նպատակային նախաձեռնությունների միջոցով:

➤ **Կարիերայի ուղղորդման պատասխանատուների հմտությունների բարելավում**

Կարիերայի ուղղորդման պատասխանատուների զինում նորարարական գործիքներով՝ ուսանողների և մեծահասակների համար տարբեր ուղղորդման կարիքները արդյունավետորեն լուծելու համար:



**Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմի**

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

3. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՏԵՔՍՏ

3.1 Հայաստանի ՄԿՈՒ ազգային համակարգի ակնարկ

3.1.1 Նախապատմություն և ընթացիկ համատեքստ

Վերջին մարտահրավերները և կառավարության արձագանքը

Վերջին տարիներին Հայաստանը բախվել է բազմաթիվ սոցիալ-քաղաքական և տնտեսական մարտահրավերների, այդ թվում՝ 2018 թվականի թավշյա հեղափոխությունը, COVID-19 համաճարակը, 44-օրյա հակամարտությունը Ադրբեյջանի հետ 2020 թվականին և վերջին ռազմական գործողությունները Լեռնային Ղարաբաղում 2023 թվականի սեպտեմբերին: Վերջին ռազմական գործողությունները հանգեցրել է ավելի քան 100,000 էթնիկ հայերի տեղահանմանը: Ի պատասխան՝ Հայաստանի կառավարությունը և միջազգային գործընկերները իրականացրել են ճգնաժամային արձագանքման տարբեր միջոցառումներ՝ աջակցելու տեղահանված բնակչությանը:

Ընթացիկ բարեփոխումներ և ռազմավարական նպատակներ

Չնայած այս մարտահրավերներին, Հայաստանը շարունակել է առաջ տանել բարեփոխումների իր օրակարգը: Կառավարության 2021-2026թթ. ծրագիրը շեշտը դնում է բոլոր ոլորտներում փաստերի վրա հիմնված քաղաքականության և ռազմավարական պլանավորման վրա՝ ընդգծելով կրթության դերը կայուն և ներառական աճի խթանման գործում՝ համաձայն Հայաստանի վերափոխման մինչև 2050 թ.-ի ռազմավարություն:

3.1.2 ՄԿՈՒ-ի հիմնական տարրերը որակավորման ազգային

շրջանակում

ՄԿՈՒ մակարդակները Հայաստանում



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Հանրակրթության մակարդակները համապատասխանում են ՈԱՇ-ի մակարդակներ 1, 2 և 4-ին:

Հայաստանում ՄԿՈՒ որակավորումները համապատասխանում են ՈԱՇ 3-րդ և 4-րդ մակարդակներին («Նախնական ՄԿՈՒ-նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն») և ՈԱՇ 5-րդ մակարդակին, («Միջին ՄԿՈՒ-միջին մասնագիտական կրթություն»):

Բարձրագույն կրթության որակավորումները համապատասխանում են ՈԱՇ 6-8 –րդ մակարդակներին:

ՄԿՈՒ ծրագրերի հասանելիություն

Ե՛վ նախնական, և՛ միջին ՄԿՈՒ կարելի է մուտք գործել հիմնական ընդհանուր (9-ամյա) և միջնակարգ (12-ամյա) ընդհանուր կրթության հիմքով, ինչպես նաև նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության միջոցով՝ միջին ՄԿՈՒ հաստատություններ ընդունվելու դեպքում:



**Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմի**

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Անձնական խնամողի և ատամնատեխնիկական հմտությունների բացերի վերլուծություն և առաջարկություններ

Մակարդակ	Որակավորում	Կրթության ստադիան (մակարդակ), ծրագիր	Տևողություն
1-ին	Տարրական կրթության վկայական	Միջնակարգ կրթության 1-ին ստադիան	4 տարի
2-րդ	Հիմնական կրթության վկայական	Միջնակարգ կրթության 2-րդ ստադիան	5 տարի
3-րդ	ԱՐՀԵՍՏԱՎՈՐ (Հիմնական կրթությամբ) (Վարպետային ուսուցման որակավորման վկայական)	Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագիր	6 ամսից մինչև 1 տարի
4-րդ	Միջնակարգ կրթության վկայական	Միջնակարգ կրթության 3-րդ ստադիան՝ սակայն դպրոց	3 տարի
	ԱՐՀԵՍՏԱՎՈՐ (Միջնակարգ կրթությամբ) (Արհեստագործական կրթության դիպլոմ)	Նախնական մասնագիտական արհեստագործական կրթական ծրագիր	1-3 տարի
5-րդ	ՄԱՍՆԱԳԵՏ Միջին մասնագիտական կրթության մասնագետի դիպլոմ	Միջին մասնագիտական կրթության ծրագիր	2-5 տարի
6-րդ	ԲԱՎԱՆԱԳԵՐ Բակալավրի դիպլոմ	Բակալավրի կրթության ծրագիր	Նվազագույնը 3 տարի
7-րդ	ՄԱԳԻՍՏՐԱՆՈՍ մագիստրոսի դիպլոմ	Մագիստրոսի կրթական ծրագիր	Նվազագույնը 1 տարի
	ԴԻՊԼՈՄԱՎՈՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԵՏ (Դիպլոմավորված մասնագետի դիպլոմ)	Դիպլոմավորված մասնագետի կրթական ծրագիր	Նվազագույնը 5 տարի
8-րդ	ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ (Գիտությունների թեկնածուի վկայական)	Հետբուհական մասնագիտական կրթական ծրագիր	Նվազագույնը 3 տարի



Միջնակարգ կրթություն



Մասնագիտական կրթություն



Բարձրագույն կրթություն


Գծապատկեր 2. Որակավորումների ազգային շրջանակը Հայաստանում: Աղբյուրը՝ ԹՈՒՐԻՆՅԱՆ ԳՈՐԾՆԱԹԱՑ. Հայաստանում շարունակական կրթության քաղաքականության ակնարկ



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Անձնական խնամողի և ատամնատեխնիկական հմտությունների բացերի վերլուծություն և առաջարկություններ



Գծապատկեր 3 Կրթական համակարգը Հայաստանում Աղբյուր՝ ETF, 2020թ

3.1.3 ՄԿՈՒ հաստատությունների վերահսկում

Կրթական կարգավորումներ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթությունը հիմնականում իրականացվում է արհեստագործական ուսումնարաններում, իսկ միջին մասնագիտական կրթությունը կարող է իրականացվել միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում՝ քոլեջներում:

Կազմակերպչական կարգավիճակ

Բոլոր պետական ՄԿՈՒ հաստատությունները ունեն պետական ոչ առևտրային կազմակերպությունների (ՊՈԱԿ) կարգավիճակ, որոնք գործում են համապատասխան օրենքով:



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմի

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

3.1.4 ՄԿՈՒ շարունակական կրթության և քաղաքականության ուղղությունները

Շարունակական մասնագիտական ուսուցում

Հիմնականում կազմակերպվում է միասնական սոցիալական ծառայությունների կողմից (Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակա կառույց) աշխատաշուկայի քաղաքականության շրջանակներում՝ թիրախավորելով խոցելի համարվող բնակչության որոշակի խմբեր (գրանցված գործազուրկներ, հաշմանդամներ, երիտասարդ մայրեր՝ առանց մասնագիտության, բանտարկյալներ, զորացրված զինվորներ և այլն):

Ուղղորդող քաղաքականություն

Հայաստանում ՄԿՈՒ քաղաքականության ուղղությունն ու առաջնահերթ գործողությունները հիմնված են մի քանի հիմնական ռազմավարական փաստաթղթերի վրա.

- ՀՀ կրթության մինչև 2030թ. զարգացման ծրագիր
- ՀՀ 2021-2026թթ կառավարության ծրագիր

Կրթության իրականացման գործողությունների ծրագիր 2030թ. բնակչության որոշակի խմբեր (գրանցված գործազուրկներ, հաշմանդամներ, երիտասարդ մայրեր՝ առանց մասնագիտության, բանտարկյալներ, զորացրված զինվորներ և այլն),

Նորմատիվ փաստաթղթեր

Մինչ 2030թ. օրենսդրություն. Մինչև 2030թ. կրթության նոր ռազմավարությունը, Հայաստանի կրթական համակարգը ղեկավարվում էր երեք հիմնական օրենքներով.

- Կրթության մասին օրենք (1999 թ.)
- Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենք (2004 թ.)
- Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին օրենք (2005 թ.)
- Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին օրենք (2024 թ.)
- Իրականացման ծրագիր 2017-2023թթ., հաստատված 2019թ.

2030թ հաջորդող ռազմավարական փոփոխություններ

- Կրթության 2030 ռազմավարության ներդրումից հետո ԿԳՄՍՆ Նախաձեռնել է կրթության բոլոր մակարդակները կարգավորող իրավական դաշտի համապարփակ ամփոփում
- ՄԿՈՒ նոր օրենսդրություն. 2024թ. հունիսի 24-ին ուժի մեջ է մտել ՄԿՈՒ մասին նոր օրենքը¹, որը պարունակում է մի քանի կարևոր կետեր,
 - հասկացությունների և սահմանումների հստակեցում,

¹ arlis.am/DocumentView.aspx?DocID=193918



- աշխատանքի վրա հիմնված ուսումնառությանը որպես կրթության կազմակերպման ձև²,
- վերանայված ընդհանուր պահանջները ՄԿՈՒ ծրագրերին, ներառյալ լրացուցիչ դասընթացների հնարավորությունը, որոնք հավաստում են ստացված ուսումնառության արդյունքները և հիմք են ստեղծում միկրոորակավորումների համար
- ՄԿՈՒ ֆինանսավորման համակարգի վերանայում և ձեռնարկատիրական գործունեության խթանում,
- ՄԿՈՒ հաստատություններում վարչական և դասախոսական անձնակազմի հավաքագրման և վերապատրաստման մեխանիզմների վերանայում,
- ՄԿՈՒ ուսանողների և վերապատրաստվողների իրավունքների և պարտականությունների կարգավորում:

3.1.5 ՄԿՈՒ կառավարում և համակարգում

Պետական մակարդակի պարտականություններ

Հայաստանում ՄԿՈՒ կենտրոնացված կառավարվում է ԿԳՄՍՆ-ի կողմից, որը վերահսկում է քաղաքականության մշակումը, իրականացումը և համակարգի ամենօրյա կառավարումը: Նախարարությունը համագործակցում է մի քանի հիմնական կառույցների հետ՝ ապահովելու ՄԿՈՒ ոլորտի համապարփակ և արդյունավետ կառավարում:

Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային խորհուրդ

- ✓ 2008 թվականին ստեղծված այս եռակողմ խորհրդատվական մարմինը ներառում է ներկայացուցիչներ կառավարությունից, գործատուներից և արհմիություններից հավասար թվով:
- ✓ Նրա հիմնական դերն է խորհրդատվություն տրամադրել ԿԳՄՍՆ-ին որոշումների կայացման և ՄԿՈՒ ծրագրերի մշակման վերաբերյալ:

Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն (ՄԿՈՒԶԱԿ)

- ✓ ՄԿՈՒ-ին աջակցող այս հիմնական հաստատությունը ակտիվորեն մասնակցում է քաղաքականությունների և ռազմավարությունների, միջնաժամկետ և երկարաժամկետ զարգացման ծրագրերի և գործողությունների պլանների մշակմանը:
- ✓ Պարտականությունները ներառում են հետազոտությունների իրականացում, ՄԿՈՒ կատարողականի վերլուծություն և գնահատում, ՄԿՈՒ հաստատությունների և աշխատաշուկայի միջև հաղորդակցության ապահովում և որակավորման չափանիշների և ուսումնական ծրագրերի մշակում/թարմացում:
- ✓ Այն նաև տրամադրում է մասնագիտական փորձ, ադապտեցնում է ՄԿՈՒ միջազգային լավագույն փորձը, աջակցում է Որակավորումների ազգային շրջանակի (ՈԱԱԿ) մշակմանը և ապահովում է որակավորումների եվրոպական

² <https://escs.am/am/news/23086>



շրջանակի (EQF) հետ համապատասխանեցումը՝ ներառյալ կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգի ներդրումը:

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ)

- ✓ ՈԱԱԿ-ը, որը հիմնադրվել է 2008 թվականին, լիազորված է իրականացնել և վերահսկել որակի ապահովման գործընթացները նախնական, մասնագիտական և բարձրագույն կրթության ոլորտներում:

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն (ԿՏԱԿ)

- ✓ Իր հիմնադրումից ի վեր՝ 2004 թվականին, ԿՏԱԿ -ը պատասխանատու է կրթական բոլոր մակարդակներում ՏՀՏ-ի ինտեգրման և օգտագործման համար, ներառյալ միջնակարգ, մասնագիտական և բարձրագույն կրթությունը: Սա ներառում է հեռավար ուսուցման կառավարում և կրթության տեղեկատվական համակարգի կառավարման (EMIS) մշակում:

Ուսուցման ազգային հիմնադրամ

- ✓ Ստեղծվել է 2011թ.-ին և նպատակ ունի ամրապնդել ՄԿՈՒ համակարգի և աշխատաշուկայի միջև կապը: Այն կենտրոնանում է գործատուներին և նրանց կազմակերպություններին ՄԿՈՒ տարբեր ասպեկտներում ներգրավելու վրա:
- ✓ Ուսուցման ազգային հիմնադրամի առաջնային խնդիրները ներառում են աշխատաշուկայի հետազոտությունների անցկացում, պահանջվող հմտությունների բացահայտում և շարունակական ՄԿՈՒ կազմակերպում աշխատանք փնտրող տարբեր խմբերի, այդ թվում՝ աշխատող և գործազուրկ մեծահասակների համար:

Ինստիտուցիոնալ կառավարում

- ✓ ՄԿՈՒ կառավարման խորհուրդներ. այս խորհուրդները գործում են որպես կոլեգիալ կառավարման մարմիններ պետական ՄԿՈՒ քոլեջներում և արհեստագործական ուսումնարաններում, որոնք թույլ են տալիս տեղայնացնել որոշումները և կառավարումը՝ հատուկ ինստիտուցիոնալ կարիքներին և համատեքստերին:

3.1.6 Կառավարում և ինքնավարություն

Կառավարման խորհուրդներ

- ✓ ՄԿՈՒ հաստատությունների կառավարման խորհուրդները ներառում են ուսանողական մարմնի, սոցիալական գործընկեր կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, զբաղվածության գրասենյակների և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ: Խորհուրդները հաստատում են հաստատությունների բյուջեները, զարգացման (բիզնես) պլանները, ուսման վարձերը և ներքին կանոնակարգերը, ընտրում են տնօրեններին, ինչպես նախնական, այնպես էլ միջին ՄԿՈՒ հաստատությունների ղեկավարներին և այլն:

Ֆինանսական և ակադեմիական ինքնավարություն

- ✓ ՄԿՈՒ հաստատությունները ունեն որոշակի ինքնավարություն ֆինանսական (հաստատելով իրենց բյուջեն) և ակադեմիական (հաստատելով իրենց



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

ուսումնական ծրագրերը և սահմանելով դասավանդման միջոցներն ու մեթոդները) հարցերում: ՄԿՈԲ-ի ֆինանսավորման հիմնական աղբյուրը պետական բյուջեն է:

Նշանակումներ իրականացնող իրավասու մարմին

- ✓ Ուսուցիչների և դեկավար անձնակազմի նշանակումը գտնվում է ՄԿՈԲ հաստատությունների տնօրենների իրավասության ներքո:

3.1.7 Որակի ապահովում

Մոնիտորինգ և որակի ապահովում

- ✓ Կրթության մոնիտորինգը և որակի ապահովումն իրականացվում է երեք գործընթացով. ակադեմիական ծրագրերի իրականացման լիցենզավորում, հաստատություններում որակի ներքին ապահովում և որակի արտաքին ապահովում՝ պետական հավատարմագրում:

Որակի ապահովման մարմիններ

- ✓ Որակի ներքին ապահովման համակարգը չափազանց կարևոր է: Ինստիտուցիոնալ հավատարմագրման որակի ներքին ապահովման համակարգի կողմից թողարկված ինքնագնահատման հաշվետվությունները հասանելի են հավատարմագրված հաստատությունների կայքում, մինչդեռ փորձագետների զեկույցները հասանելի են ՈԱԱԿ-ի կայքում (անկախ կազմակերպություն, որը իմնադրվել է ՀՀ կառավարության կողմից 2008 թվականին): Լինելով բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ռեգիստրի (EQAR) անդամ, ՈԱԱԿ-ն իրականացնում է որակի ապահովման գործընթացներ ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման միջոցով նախնական, մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններում, ինչպես նաև նպաստում է որակի շարունակական բարձրացմանը կրթական համակարգում՝ նպաստելով հաստատությունների ինքնավարությանը և հաշվետվողականությանը:



**Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմի**

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

4. Դպրոցի/ՄԿՈՒ կենտրոնի համառոտ ներկայացում

4.1 «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» (CEPFA)

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնը» (CEPFA) կրթական հաստատություն է, որն ապահովում է եվրոպական չափանիշներին համապատասխան մասնագիտական կրթություն: CEPFA-ն հիմնադրվել է 2001 թվականին՝ համաձայն 2000 թվականին ստորագրված փոխըմբռնման հուշագրի՝ Հայաստանի Հանրապետության և Ֆրանսիայի Հանրապետության կառավարությունների միջև մշակույթի, գիտության և տեխնիկական համագործակցության մասին 04.11.1995թ. ստորագրված համաձայնագրի շրջանակներում: CEPFA-ի հիմնադիրներն են՝ SEPR-ը Լիոնում, որը հանդիսանում է IMPROVET-AM ծրագրի համակարգող, Երևանի քաղաքապետարանը, ՀՀ ԿԳՄՍ Նախարարությունը և RAFE (Rhône Arménie Formation Échanges) շահույթ չհետապնդող կազմակերպությունը և «Fondation Alliance Arménienne»: CEPFA-ն ամեն տարի վերապատրաստում է ավելի քան 200-ից ավել սովորողների խոհարարության, հրուշակեղենի, վարսահարդարման, նորաձևության և ատամնատեխնիկության ոլորտներում: Ավելին, CEPFA-ն համագործակցում է հայաստանյան ընկերությունների հետ՝ անձնակազմ բարելավելու նպատակով:

SEPR-ի դասավանդողները մշտապես CEPFA-ի կողքին են, իսկ ֆրանսերենի ուսուցումը CEPFA-ում ուսումնական ծրագրի անբաժանելի մասն է: CEPFA-ի կողմից շնորհված դիպլոմները Ֆրանսիայում մասնագիտական կարողությունների վկայականին (CAP) և մասնագիտական բակալավրիատին համարժեք պետական դիպլոմներ են: Ստացված դիպլոմը տրվում է ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից: CEPFA-ի նպատակն է տալ պատշաճ մասնագիտական կրթություն և պատրաստել արհեստավորներ, որոնք պատրաստ են մրցակցել ժամանակակից աշխատաշուկայում: CEPFA-ի առավելությունը նրա լավ հագեցած լաբորատորիաներն են, հարուստ կրթական և մեթոդական ռեսուրսները՝ մեթոդական ձեռնարկներ, դասագրքեր, մասնագիտական գրականություն: CEPFA-ն առաջարկում է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն 2-3 տարվա տևողությամբ հետևյալ



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

մասնագիտություններով՝ «Խոհարարական գործ», «Հրուշակեղենի տեխնոլոգիա», «Վարսավիրական արվեստ և զարդային դիմափառարում», «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Ատամնատեխնիկական գործ», ինչպես նաև կարճաժամկետ դասընթաց Վեոլիա ջուր ՓԲԸ-ի և Campus Veolia Rhin Rhone Méditerranée-ի հետ համատեղ Վեոլիա ջուր կազմակերպության ջրամատակարարման և ջրահեռացման մասնագետների համար:

CEPFA-ն ընտրվել է EfVET-ի (Մասնագիտական կրթության և ուսուցման եվրոպական ֆորում) նոր անդամ (միակ հայ անդամն է) 2021 թվականին: 2022 թվականից CEPFA-ն դարձել է նաև Եվրոպական կրթական հիմնադրամի գերազանցության ցանցի (ENE) անդամ: CEPFA-ն իր ավելի քան 20 տարվա փորձի ընթացքում հաջողությամբ իրականացրել և ներկայումս իրականացնում է մի շարք տեղական և միջազգային ծրագրեր: CEPFA-ն սերտ համագործակցում է Լիոնի քաղաքապետարանի, Լիոնի մետրոպոլի, Օվերն Ռոն Ալպերի շրջանի, Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատան, Երևանի քաղաքապետարանի, ՀՀ ԿԳՄՍՆ-ի, ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և այլ կազմակերպությունների հետ: Գործընկերների աջակցության շնորհիվ CEPFA-ն իրականացնում է իր և Ֆրանսիայի մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների փոխանակման ծրագրեր: CEPFA-ի ուսանողները հնարավորություն ունեն ներկա գտնվել հմտությունների համաշխարհային փառատոններին և մրցույթներին:

SEPR-ը համագործակցում է աշխարհի բազում մասնագիտական ուսուցման կենտրոնների հետ, իսկ CEPFA-ի համար այն հանդիսանում է որպես գլխավոր գործընկեր Երևանում ավելի քան 20 տարի: SEPR-ը CEPFA-ին տրամադրում է ուսումնական աջակցություն՝ մշտապես հանձնարարելով իր թիմին աջակցել CEPFA-ին նոր ուսումնական ծրագրերի մշակման և մոնիտորինգի գործում: SEPR-ը նաև նպաստում է հայ դասավանդողների վերապատրաստմանը և ապահովում է հայ երիտասարդների ընդունելությունը Ֆրանսիայում: SEPR Horizon Fund-ի միջոցով SEPR-ն աջակցում է CEPFA-ի սոցիալական քաղաքականությանը՝ մասնավորապես CEPFA ուսանողների համար կրթաթոշակների ֆինանսավորմամբ: Ավելին, 2023 թվականի փետրվարի 3-ին ՀՀ ԿԳՄՍՆ-ի, CEPFA-ի և SEPR-ի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր՝ ապագա ծրագրերի զարգացման համար՝ խթանելով ֆրանս-հայկական համագործակցությունը և ապահովելով ՄԿՈՒ ոլորտի շարունակական բարեփոխումների արդյունավետությունը:

4.2 GSMC - Գյումրու պետական բժշկական քոլեջ

Գյումրու պետական բժշկական քոլեջը հիմնադրվել է 1937 թվականին: Հիմնադրման օրվանից քոլեջը եղել և մնում է Հայաստանի Շիրակի մարզի հիմնական պետական բժշկական ուսումնական հաստատությունը: Իր գործունեության ընթացքում այն պատրաստել և կրթել է մոտ 12000 կրտսեր բժշկական անձնակազմ: Այն համագործակցում է Շիրակի մարզի և Հայաստանի այլ մարզերի բժշկական կենտրոնների հետ: Քոլեջն



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

իրականացնում է ՄԿՈՒ շարունակական դասընթացներ, անցկացնում է ուսուցիչների և մասնագիտական վերապատրաստման դասընթացներ, իրականացնում է ծրագրեր, որոնք նպաստում են միջին մասնագիտական կրթության զարգացմանը: Հայաստանում ճանաչված բազմաթիվ երախտավոր բժիշկներ իրենց մասնագիտական կրթական ուղին սկսել են այս քոլեջից: Քոլեջում իրականացնում է միջին մասնագիտական կրթություն հետևյալ մասնագիտությունների գծով՝ քույրական գործ, ատամնատեխնիկական գործ, դեղագործություն, մանկաբարձություն: Ներկայումս քոլեջում սովորում է 402 ուսանող, այդ թվում՝ ապագա բուժքույրեր՝ 174 ուսանող, ատամնատեխնիկներ՝ 56 ուսանող, դեղագործներ՝ 106 ուսանող և մանկաբարձներ՝ 66 ուսանող: Ավանդաբար քոլեջում կա իգական սեռի ուսանողները գերակշռում են. ներկայումս սովորում է 318 աղջիկ և 79 տղա:

5. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ՝ ԱՏԱՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾ

Հիմնվելով տարբեր նախարարությունների, ՄԿՈՒ քաղաքականություն մշակողների, ընկերությունների և երկու ՄԿՈՒ կենտրոնների ներկայացուցիչների հետ մեր ֆոկլուս խմբային քննարկումների վրա, ինչպես նաև հարցաշարերից, հարցազրույցներից և ստոմատոլոգիական կլինիկաներ, ընկերություններ և հիվանդանոցներ կատարած ճանաչողական այցերից՝ ստեղծվեց հետևյալ պատկերը Հայաստանում ատամնատեխնիկության կրթական ծրագրի մասին:

5.1. ՄԿՈՒ հաստատություններ և ընդունելություն

- ✓ 2024 թվականի դրությամբ Հայաստանում գործում է մոտավորապես 113 ՄԿՈՒ կենտրոն, որոնցից 25-ն առաջարկում են ատամնատեխնիկի ուսումնական ծրագրեր:
- ✓ Դասընթացին մասնակցելու նվազագույն տարիքը՝ 15 տարեկան և պահանջող փաստաթուղթը՝ առնվազն հիմնական դպրոցի ավարտական փաստաթուղթ՝ վկայական:

5.2. Ուսման վարձը և տնողությունը

- ✓ Ուսուցումը վճարովի է, ուսման վարձերը տարբեր հաստատություններում տարբեր են (միջինում տարեկան մոտ 100,000 դրամ նախնական ՄԿՈՒ համար և 350,000 դրամ միջին ՄԿՈՒ համար): Օրինակ՝ մի հաստատությունում երեք տարվա դասընթացի համար ուսման վարձը կազմում է 890,000 դրամ (մոտ 2,000 եվրո), իսկ մյուսում՝ 740,000 դրամ (մոտ 1,700 եվրո):

5.3. Կառուցվածքը և ուսումնական պլանը

- ✓ Ատամնատեխնիկի դիպլոմը Հայաստանում «Միջին մասնագիտական կրթության» մի մասն է և համապատասխանում է որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակին, Եվրոպական որակավորման շրջանակի 4-րդ և 5-րդ մակարդակներին



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմի

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

միջև: Շրջանավարտները կարող են բարձրագույն կրթություն ստանալ ատամնաբույժ դառնալու համար:

- ✓ Շրագիրը տնում է 2 տարի բարձրագույն միջնակարգ կրթություն ունեցող ուսանողների համար և 3 տարի հիմնական կրթություն ունեցողների համար:
- ✓ Շրագրային նվազագույնը տրամադրվում է ԿԳՄՍ նախարարության կողմից՝ մոդուլների տեսքով, ուսումնական ծրագիրն իրականացվում է ուսումնական կենտրոնների կողմից: Ուսումնական պլանում ճշգրտումներ կարող են կատարվել՝ հիմնվելով ուսանողների և մասնագիտական կարիքներից, ընդ որում յուրաքանչյուր մոդուլ ունի հատուկ ուսուցման արդյունքներ (տեսական և գործնական)՝ կատարողականի չափանիշներով:

5.3.1 CEPFA-ի մանրամասն ուսումնական պլանի օրինակ

➤ 2-ամյա ծրագիր

Կրթության հիմքը՝ Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթությամբ

Տևողությունը՝ 2 տարի

Ուսուցման ձևը՝ առկա

Ուսման վարձի չափը՝ 350.000 դր

Ընդունելությունը՝ կենսաբանություն առարկայից գրավոր քննությամբ

➤ 3-ամյա ծրագիր

Կրթության հիմքը՝ Հիմնական ընդհանուր կրթությամբ

Տևողությունը՝ 3 տարի

Ուսուցման ձևը՝ առկա

Ուսման վարձի չափը՝

➤ Տարի 1՝ 300.000 դր

➤ Տարի 2՝ 330.000 դր

➤ Տարի 3՝ 350.000 դր

➤ Ընդունելությունը՝ կենսաբանություն առարկայից գրավոր քննությամբ

5.3.2. Ծրագրի կառուցվածքը

➤ 2-ամյա ծրագիր

Տարի 1. Հանրակրթական առարկաներ

Տարի 2. հումանիտար, սոցիալ տնտեսագիտական առարկաներ, առանցքային հմտություններ, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլներ

➤ 3-ամյա ծրագիր

Տարի 1. Ընդհանուր ուսուցում, ավարտական քննություն

2-րդ և 3-րդ տարիներ. Մասնագիտական տեսական և գործնական ուսուցում, ավարտական քննություն՝ գնահատված ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հանձնաժողովի կողմից



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

5.4. Պրակտիկա և դասավանդում

- ✓ Պրակտիկա. 4 շաբաթ նախավարտական արտադրական պրակտիկա ընկերությունում:
- ✓ Դասընթացները հիմնականում վարում են պրոֆեսիոնալ ատամնատեխնիկներ: Դասավանդողների վերապատրաստման և կատարելագործման զգալի կարիք կա, որը ներկայումս լուծում է ՄԿՈՒԶԱԿ-ը՝ մեթոդական վերապատրաստումների միջոցով, որոնք կենտրոնացած են մանկավարժության, մոդուլի մշակման, գնահատման և ուսումնական նյութերի վրա, և որոնք չեն ներառում մասնագիտական վերապատրաստում:

5.5. Սարքավորումներ և հարմարություններ

- ✓ ՄԿՈՒ հաստատությունները սովորաբար հագեցած են ատամնատեխնիկական լաբորատորիաներով: Այնուամենայնիվ, այս լաբորատորիաների ընդհանուր վիճակը զգալիորեն տարբերվում են, շատ կենտրոններում դրանք հիմնականում հնացած են: Ֆոկուս խմբերի քննարկումների և հարցաթերթիկների արդյունքներով ունենք նույն պատկերը. ՄԿՈՒ կենտրոններում առկա սարքավորումներն անբավարար են:
- ✓ Չգալի տարբերություններ կան գործընկեր ՄԿՈՒ հաստատությունների միջև, հատկապես սարքավորումների և դասավանդողների մասնագիտական որակավորման միջև: CEPFA-ն երևանում լավ կահավորված է, բացակայում է միայն CAD/CAM սարքավորումները, մինչդեռ Գյումրու ուսումնական հաստատությունն ունի ցածրորակ սարքավորումներ, իսկ դասավանդողները չունեն անհրաժեշտ պատրաստվածություն՝ այն արդյունավետ օգտագործելու համար:

5.6. Շուկայի կարիքները և ուսումնական պլանի համապատասխանեցումը


- ✓ Հարցված ՄԿՈՒ հաստատությունների մեծ մասը գնահատում են իրենց ծրագրերը՝ համադրելով դրանք աշխատաշուկայի պահանջների հետ և օգտագործելով համապարփակ մոտեցում, որը կարող է ներառել.
 - Կանոնավոր աուդիտ՝ ընթացիկ ուսումնական ծրագրի համապատասխանությունը գնահատելու համար:
 - Պլանավորված հանդիպումներ գործատուների հետ՝ քննարկելու ոլորտի զարգացող կարիքները:
 - Հարցաթերթիկների բաշխում ինչպես նոր շրջանավարտների, այնպես էլ գործատուների միջև վերապատրաստման արդյունավետության և բարելավման վերաբերյալ կարծիքներ հավաքելու համար:
 - Ընթացիկ քննարկումներ գործատու կազմակերպությունների հետ՝ ապահովելու վերապատրաստման համահունչությունը ոլորտի միտումներին և պահանջներին:



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

- ✓ Հարցվածների զգալի մասը (ՄԿՈՒ հաստատություններ, մասնավոր հատված և շահագրգիռ կողմեր) հաղորդել են ատամնատեխնիկ վերապատրաստման անհրաժեշտության նկատելի աճի մասին վերջին հինգ տարիների ընթացքում: Այս միտումը ընդգծում է ուսումնական ծրագրերի շարունակական վերանայման և նորարարական վերապատրաստման մոդուլների ներդրման անհրաժեշտությունը՝ ատամնաբուժական տեխնոլոգիայի զարգացող չափանիշների համապատասխանելու համար:



Գծապատկեր 4. Վերջին հինգ տարվա ատամնատեխնիկ վերապատրաստման դասընթացների պահանջարկը. ՄԿՈՒ կենտրոններին ուղղված հարցաշար

- ✓ ՄԿՈՒ ծրագրերը սահմանում են, որ բոլոր ուսանողները պետք է պարտադիր ձեռք բերեն հմտությունների հիմնական խումբ. SS հմտություններ, առաջին օգնություն, աշխատանքի անվտանգություն, ձեռներեցություն և հաղորդակցություն:
- ✓ Պարտադիր մասնագիտական դասագրքեր չկան. փոխարենը օգտագործվում են բարձրագույն կրթության ձեռնարկներ և ակադեմիական դասագրքեր, որոնք կարող են դժվար լինել և միշտ չէ, որ հարմարեցված են ՄԿՈՒ սովորողների համար:

5.7. Մասնագիտական կապեր և իրական ուսուցում

- ✓ Քուլեջի ուսումնական պրոցեսի մաս է կազմում կապը մասնագետների և գործընկեր ընկերությունների հետ: Օրինակ, ուսանողների համար գործատուները կազմակերպում են դասընթացներ, սեմինարներ և վարպետության դասեր:
- ✓ Դասավանդողների կատարելագործումը և վերապատրաստումը կարևոր մարտահրավեր է: Դասավանդողները կարող են թարմացնել իրենց հմտությունները ընկերություններում, սակայն վերապատրաստումը, հատկապես թվային տեխնոլոգիաների ոլորտում, թանկ է, և հավաստագրումը միշտ չէ, որ տրամադրվում է:




Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

5.8. Սեռերի հարաբերակցությունը և զինվորական ծառայության ազդեցությունը

- ✓ Վիճակագրական տվյալները ցույց են տալիս «Ատամնատեխնիկ» մասնագիտությամբ արական սեռի ուսանողների ավելի մեծ մասնաբաժին:



Գծապատկեր 5. 2024թ-ի տղաների/աղջիկների հարաբերակցությունը հարցվողների հաստատություններում - ՄԿՈԻ հաստատություններին ուղղված հարցաշար

- ✓ 18 տարեկանում պարտադիր զինվորական ծառայությունը եզակի մարտահրավեր է տղա ուսանողների համար: Ավարտելուց հետո շատերը պետք է սկսեն իրենց զինվորական ծառայությունը, ինչը երկու տարով հետաձգում է նրանց աշխատանքը և կարող է հանգեցնել ձեռք բերված գիտելիքների և հմտությունների կորստի:

5.9. Գործատուի մարտահրավերները


Որակավորման բացեր

- ✓ Գործատուները զգալի դժգոհություն են հայտնում շրջանավարտների հմտությունների վերաբերյալ՝ հատկապես ընդգծելով գործնական փորձի և թվային հմտությունների զգալի պակաս:




Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմի

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:



Գծապատկեր 6. Գործատուների բավարարվածության աստիճանը շրջանավարտների հմտություններից – գործատուներին ուղղված հարցաշար:



Գծապատկեր 7. Պահանջվող թվային հմտություններ ունեցող թեկնածուներին գտնելու դժվարություն- գործատուներին ուղղված հարցաշար

- ✓ Այս հմտությունների բացերի պատճառով ընկերությունները հաճախ իրենք են ձեռնարկում նոր աշխատողների վերապատրաստումը, ինչը զգալի ծախսեր է առաջացնում նոր աշխատողի համար: Ֆոկուս խմբային հանդիպման ժամանակ գործատուներից մեկը նշեց նման դասընթացի միջին արժեքը՝ մոտ 6000 եվրո մեկ սովորողի համար:
- ✓ Ներկայիս ուսումնական ծրագիրը չի ապահովում բավարար գործնական և թվային տեխնոլոգիաների ուսուցում:
- ✓ Գործատուները հայտնում են, որ այս հմտությունների պակասը բացասաբար է անդրադառնում իրենց գործունեության վրա մի քանի առումներով, ներառյալ ժամանակի, ֆինանսական ռեսուրսների, արդյունավետության, հաճախորդների բավարարվածության և արտադրանքի ընդհանուր որակի առումով:

5.10. Սարքավորումներ և տեխնոլոգիաներ

- ✓ Ընկերությունները, ընդհանուր առմամբ, շատ լավ կահավորված են սարքավորումներով, օգտագործում են նույն բարձրորակ ճանաչված արտադրողների նյութերը, ինչպես Ֆրանսիայում (օրինակ՝ IVOCLEAR, RENFERT, 3SHAPE):
- ✓ Ատամնատեխնիկական ընկերությունների մեծ մասն օգտագործում է առաջադեմ թվային տեխնոլոգիաներ պրոթեզների արտադրության մեջ՝ ընդգծելով այս ոլորտներում հմուտ շրջանավարտների անհրաժեշտությունը:



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

5.11. Թվային ուսուցման հզորացման անհրաժեշտություն

- ✓ CAD/CAM տեխնոլոգիաների ընդլայնված ներառումը ուսման մեջ կբավարարի աշխատաշուկայում զարգացող ատամնատեխնիկության թվային կարիքները:

5.12. Աշխատավարձ և աշխատանքային պայմաններ

- ✓ Աշխատավարձ. կախված է արտադրողականությունից և աշխատած ժամերից, դեկտեմբեր ամսին և ամառային ժամանակահատվածում ատամնաբուժական տուրիզմի պատճառով մեծ պահանջարկ կա: Պայմանագրերը սովորաբար նախատեսում են օրական 8-ժամյա աշխատանքային գրաֆիկ, բայց աշխատանքի անավարտ լինելու պատճառով հաճախ աշխատանքային օրը երկարում է:
- ✓ Արհմիություններ. երևանում գործում է ընկերությունների ոչ ֆորմալ ակումբ: Կան 5 լաբորատորիաներ, որոնք առաջատար են շուկայում: 2 ամիսը մեկ անգամ նրանք հանդիպում են՝ քննարկելու աշխատաշուկայի կարիքները:
- ✓ Ապահովագրություն և փոխհատուցում. բժշկական ապահովագրությունը ներառում է ատամնաբուժական խնամք, բացառությամբ ատամնաբուժական պրոթեզների և իմպլատացիայի: Ապահովագրության ոլորտը զարգացող է և կան պլաններ այն դարձնել պարտադիր:

5.13. Հեռանկարներ և հնարավորություններ

- ✓ Հեռանկարներ. ընկերությունների հետ ֆոկուս խմբային հանդիպումները հաստատում են, որ Հայաստանում ատամնաբուժական պրոթեզավորման ոլորտի ապագան թվայնացման, նոր նյութերի և տեխնոլոգիաների մեջ է: Հզորացված վերապատրաստման ծրագրերը և շուկայի կարիքներին համապատասխանեցումը առանցքային կլինեն ընթացիկ մարտահրավերներին դիմակայելու և հմուտ աշխատուժ ապահովելու համար:
- ✓ Չարգացող ոլորտ. բժշկական զբոսաշրջությունը դարձել է բիզնեսի կարևոր ասպեկտ Հայաստանի ստոմատոլոգիական ոլորտի շատ ընկերությունների համար:



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

6. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՅԱՅՏՈՒՄՆԵՐ՝ ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ԽՆԱՄՔ

6.1 Հարցաշարերի ստուգաթերթերի հիմնական եզրակացությունները

Հետազոտության արդյունքները նախ և առաջ ցույց են տալիս, որ երկրում ՄԿՈՒ առաջարկի մեծ մասը ուղղված է երիտասարդներին, իսկ մեծահասակների հմտությունները կատարելագործելու և վերապատրաստելու համար ընձեռվում են սահմանափակ հնարավորություններ: Դասընթացների մեծ մասը առկա է՝ սահմանափակ թվայնացմամբ: Ուսման վարձը կարող է և՛ կիրառվել, և՛ ոչ, երկու տարբերակներն էլ հնարավոր են: Լաբորատորիաները բնութագրվում են որպես միջին/հնացած և հաճախ չթարմացվող կամ փոխարինվող: Կան համագործակցության տարբեր ձևեր ընկերությունների և մասնավոր հատվածների/սեկտորի/ միջև, թեև իրական և ֆորմալ ԴՈՒԱԼ համակարգը /WBL/ դեռևս բացակայում է: Պրակտիկաները կանոնավոր են, սակայն ընկերությունների հետ համագործակցության այլ ձևեր ինչպիսիք են՝ կադրերի վերապատրաստում, այցելություններ, նախագծային աշխատանքներ և այլն, սահմանափակ են և ներառում են փոքր թվով կառույցներ: Մինչդեռ դուրս մնացողների տոկոսը համեմատաբար ցածր է 5%-ից, իսկ ավարտողների տոկոսը՝ 90%-ից բարձր, 6 ամիս անց աշխատանքի անցած շրջանավարտների տոկոսը տատանվում է 20-40% սահմաններում:

Հատկապես առողջապահական մասնագիտության առումով հիմնական պրոֆիլը բուժքրոջ մասնագիտությունն է՝ հատուկ հաստատված ուսումնական ծրագրով, որը այնքան էլ հաճախ չի թարմացվում: Հետևաբար բուժքրոջ մասնագիտությունը համալսարանական պրոֆիլի փոխարեն ՄԿՈՒ պրոֆիլ է, ընդունվելու համար անհրաժեշտ չէ ո՛չ դիպլոմ, ո՛չ էլ ֆիզիկական պատրաստվածություն /պահանջներ/, հետաքրքրված դիմորդները սովորաբար հանձնում են ընդունելության քննություններ: Ուսանողների մեծ մասը իգական սեռի ներկայացուցիչներ են, շատ քիչ՝ արական: Ուսումնական ծրագրերը պարունակում են ստանդարտ թեմաներ՝ տեսական և գործնական ուսուցմամբ, չնայած հատուկ ուշադրություն չի հատկացվում հատուկ կարիքներով մարդկանց (տնային խնամք, տարեցներ, հաշմանդամներ և այլն): Հասանելի է միայն տարեցների խնամքի համար նախատեսված փոքր մոդուլ բոլոր նրանց համար ովքեր շարունակում են իրենց մասնագիտացումը 4-րդ կուրսում: Դասախոսները պրոֆեսիոնալ մասնագետներ են (բժիշկներ, բուժքույրեր, ֆիզիոթերապևտներ և այլն), ոչ մի մասնագիտական պրոֆիլ կամ վերապատրաստում չի իրականացվում առողջապահական օգնության ծառայություն ցուցաբերելու համար: Ֆորմալ և հատկապես ոչ ֆորմալ համակարգի ճանաչումը շատ թույլ է, կամ դեռ բացակայում է երկրում :



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Առողջապահական հաստատությունների հետ հետադարձ կապը հարցաշարերի միջոցով հաստատում է, որ անհրաժեշտ կլինի ձեռք բերել հատուկ մասնագիտական գիտելիքներ, շրջանավարտների կարողությունները մասամբ են բավարարում նրանց պահանջներին՝ մասնավորապես հատուկ կարիքներով մարդկանց խնամքի կազմակերպման հարցում: Ավելին, նրանք բոլորն էլ վստահեցնում են, որ հաստատությունները լիովին չեն համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց հասանելիության չափանիշներին: Որոշները նույնիսկ չունեն հասանելի անվասայլակներ: Անձնակազմի համար նախատեսված վերապատրաստումը սահմանափակ է և ոչ կանոնավոր /հախուռն/ հատկապես, երբ ֆինանսավորվում է նախարարությունների կողմից:

Դրականն այն է, որ բոլոր բժշկական հաստատությունները համագործակցում են ՄԿՈՒ քոլեջների հետ և ընդունում պրակտիկանտներին: Բացի այդ, նրանք մասնակցում են պետական ավարտական քննությունների գործընթացին:

6.2 Հարցագրույցների հիմնական բացահայտումները

Ծրագրի շրջանակի կարճ ներկայացումից հետո հարցագրույցների մեծ մասը կենտրոնացավ սանիտարի մասնագիտացման վրա, այն միակ ընդհանուր օգնականն է, ում բժշկական հաստատությունը աշխատանքի է ընդունում, չնայած այն բանի, որ նա չունի որոշակի պրոֆիլավորում և վերապատրաստում: Այլ կերպ ասած, խնամքի ոլորտում բուժքրոջ օղակից ներքև գտնվող անձնակազմի մասով կա մի մեծ բաց. և առողջապահական օգնության ցածր օղակի ծառայողները վերապատրաստում չեն անցնում: Առողջապահական օգնականին վերաբերող ուսումնական ծրագիրը և ընդհանուր պրոֆիլը մեծ հետաքրքրություն և արժեք է ներկայացնում բոլոր հարցվածների համար:

Սանիտարը կարող է նույնականացվել որպես կրտսեր բուժաշխատող (աշխատող), և որպես սանիտար աշխատանքի անցնելու համար միակ ոչ պաշտոնական պահանջներից է ունենալ 12-ամյա միջնակարգ կրթություն, լինել 29-70 տարեկանի սահմաններում, ունենալ լավ առողջական վիճակ, կարող է պահանջվել արյան քննություն, ֆիզիկական կարողություններ, պարտադիր պատվաստումներ: Քանի որ սա իրական մասնագիտական բնութագիր չէ, չափանիշներն ու ընտրության գործընթացները պատահական են ընտրված: Որևէ դասընթաց կամ վերապատրաստում նախատեսված չէ, ուսուցման մի մաս է կազմում բուժքույրերի կողմից առաջարկվող «սովորել կատարելով մեթոդը» (ուսուցում աշխատանքի ժամանակ): 2022թ.ին Կառավարության փորձը այնքան էլ հաջողություն չի ունեցել:

Նրանց աշխատանքի շրջանակը ներառում է տարածքներն ու հիվանդներին մաքուր պահելը (հիվանդներին կերակրելը, հիվանդներին տեղափոխելը՝ հատկապես, երբ



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

չկա նրանց տեղաշարժելու հարմարություններ): Ամենապահանջվող հմտություններից է կարեկցանքը, մարդկային հարաբերությունները ավելի մեծ դեր ունեն, քան ֆիզիկական կարողությունները: Միջին տարիքը հաճախ մոտ է 45-55 տարեկանին, աշխատանքը՝ շաբաթական առավելագույնը 48 ժամ է (օրենքով), անցնում են 3-ամսյա փորձաշրջան, որից հետո կարող են կնքել անորոշ ժամկետով պայմանագիր:

Կախված նրանից, թե որտեղ են նրանք աշխատում, հոգ են տանում մահճակալների, մաքրման և այլի մասին, սակայն, վերակենդանացման բաժանմունքում նրանք ունեն լրացուցիչ պարտականություններ, որով ավելի նման են բուժքույրերին՝ իրականացնում են ավելի ծանր հիվանդների խնամք և ունեն ավելի շատ ֆիզիկական ուժի կարիք: Սանիտարները դեղորայք չեն տրամադրում, ներարկումներ չեն անում, չունեն հերթափոխի կազմակերպման պատասխանատվություն: Ինչ վերաբերում է հիվանդների և հարազատների հետ ընդհանուր շփմանը, ապա հատուկ կանոններ չկան. և՛բուժքույրը և՛ սանիտարը կարող են անել դա, բայց ոչ վերակենդանացման բաժանմունքի հիվանդների հետ: Ընդհանուր առմամբ, սանիտարները չեն խոսում հարազատների հետ հիվանդների վիճակի մասին:

Ինչ վերաբերում է հաշմանդամություն ունեցող մարդկանց, ապա հատուկ ինչ որ բան չկա. և՛ բուժքույրերը և՛ բժիշկները կարող են նրանց սովորեցնել ինչպես վարվել հիվանդների հետ: Չկան հատուկ կանոններ, պարզապես անհրաժեշտ է ողջախոհություն և փորձ:

Բուժքույրերը ներգրավված են տնային խնամքի մեջ՝ հատկապես պատերազմական գոտիներից եկած փախստականների տնային խնամքում: Սանիտարների պատրաստության բարձրացումը նաև թույլ կտա նրանց ավելի շատ աջակցել տնային խնամքի բուժքույրերին:

Կանոնակարգված սանիտարական մասնագիտացման և խիստ պահանջների տարերային ներդրումը կարող է համակարգի համար շոկային լինել և այն կպահանջի որոշակի ժամանակ բոլորին վերապատրաստելու և հավաստագրելու համար: Բացի այդ, նրանք ամենայն հավանականությամբ իրավունք կունենան պահանջել ավելի բարձր աշխատավարձ: Այնուամենայնիվ, բոլորն են համաձայն, որ անհրաժեշտ է որոշակի վերապատրաստում և փորձնական (պիլոտային) փուլ իրականացնել՝ երկրում առողջապահական խնամողի մասնագիտացման իրագործելիությունը ապահովելու համար:

Սանիտարների պրոֆիլավորման և ուսուցման կարիքը խիստ առաջացել է հատկապես այն հաստատատություններում, որոնք զբաղվում են հատուկ կարիքներով անձանց խնամքով՝ հատկապես մտավոր հաշմանդամություն ունեցողների, երբեմն բարդացած ֆիզիկական խնդիրներով՝ կաթվածով, հավասարակշռության (կոորդինացիայի) խանգարումով և այլն:

Հատկապես այս դեպքերում պահանջվող հմտություններն են՝ օգնելու պատրաստակամությունը, բարոությունը, կարեկցանքը: Հաճախ կա խնամքի անհատական մոտեցման պահանջ՝ հատկապես շիզոֆրենիայի, դեմենցիայի դեպքում:



**Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից**

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Նրանց խնամում են 24 ժամ, շաբաթական 7 օր: Անձնակազմը ստիպված է զբաղվել բազմաթիվ ծանր դեպքերով և հաճախ նույնիսկ թողնում է աշխատանքը փորձաշրջանի ավարտից առաջ՝ դժվարությունների պատճառով:

Հատուկ դասընթացի առկայությունը մեծ կարևորություն կունենա, քանի որ սանիտարները մասնագիտացված չեն, բայց գործ ունեն ծանր հիվանդություններով և կարիքավոր մարդկանց հետ: Նախնական կրթությունը շատ կարևոր նշանակություն կունենա, քանի որ մինչ այժմ օրենքով պահանջ չի հաստատվել: Բացի այդ գործնական վերապատրաստման կարիքը ավելի մեծ է, քան տեսականը:

Երկրում մոտ 65-70 հազար մարդ ունի հոգեկան առողջության խնդիրներ, ընդ որում, միայն 2000-ը գտնվում են հատուկ բուժօգնություններում, իսկ մյուսները չեն օգտվում խնամքի ծառայություններից:

Տնային խնամքի աջակցության առումով հատկապես կարևոր է Գյումրիի «Կարիտաս» կազմակերպության ունեցած փորձը: Նրանց կողմից իրականացվող ծրագիրը մեկնարկել է 2002թ.-ին, որի նպատակն է օգնել միայնակ մարդկանց, տարեցներին, անապահով խավերին, նրանք նաև տրամադրում են սառը սնունդ իրենց իսկ տարածքներում: Նրանք կարևորել են նաև, որ երիտասարդները նույնպես կարող են տնային խնամքի կարիք ունենալ:

2002թ.-ին նրանք սկսել են աշխատողների վերապատրաստումը գերմանական «Կարիտաս» գրքի օգնությամբ, որն ուղղված է եղել խնամքի ծառայություններին: Այժմ նրանք ունեն 14 կենտրոններ, որոնցից միայն 4-ն են զբաղվում տնային խնամքով, նրանք չեն զբաղվում մտավոր խնդիրներ ունեցող մարդկանց խնամքով: Գյումրիի և հարակից մյուս կենտրոնում աշխատում են 35 անձ՝ 8 բուժքույր, 27 խնամակալ (սման՝ սանիտարներին):

Նրանք ունեն երկու խմբի շահառուներ.

-Ա խումբ՝ ամենօրյա խնամքի կարիք ունեցողներ՝ ներառյալ հանգստյան օրերը, այցելություն բուժքրոջ կողմից ամեն շաբաթ

-Բ խումբ՝ աջակցություն շաբաթական 2 անգամ, այցելություն բուժքրոջ կողմից ամիսը 2 անգամ:

Սա համարվում է հիմնական խնամք, որը անհրաժեշտության դեպքում կարող է նաև ավելանալ:

Խնամակալների պարտականություններն են՝

- Դուրս գալ/գնումներ անել
- Սնունդ պատրաստել/տրամադրել
- Ստուգել դեղերի ընդունումը
- Մաքրություն
- Անձնական հիգիենա

Բոլոր այս առաջադրանքները կարող են կատարել նաև բուժքույրերը: Սոցիալական աշխատողի դերը այլ է և տարբերվում է (տրամադրում է տեղեկություն



**Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից**

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

կենսաթոշակի և այլ աջակցությունների տրամադրման վերաբերյալ): Անձնակազմը աշխատում է լրիվ դրույքով և ստանում է աշխատավարձ, որը հավասար է հիվանդանոցի աշխատավարձին: Խնամակալները սկսում են աշխատել առավոտյան 10:00-ին և ավարտում են 17:30-ին: Խնամակալների համար վերապատրաստումը անցկացվում է «Կարիտասի» տարածքում գերմանական ձեռնարկի հիման վրա, որը ներառում է 18 մոդուլներ և եզրափակիչ թեստավորում: Իսկ դասընթացները վարում են բուժքույրերը:

Վերապատրաստումը հաստատելու համար նրանք պաշտոնական նամակով դիմել են Նախարարություն՝ թույլտվություն ստանալու խնդրանքով: Նախարարությունը, ուսումնասիրելով գիրքը, տվել է իր համաձայնությունը պայմանով, որ այն չի խանգարի սովորական ուսումնական ծրագրերի իրականացմանը: Նախկինում տնային խնամքը միայն մասնավոր էր, այժմ Կառավարությունը գումար է հատկացնում, քանի որ գիտակցում է այս ծառայության կարևորությունը:

Ինչ վերաբերում է զբաղվածությանը, նրանք հայտարարություններ են տեղադրում թափուր աշխատատեղերի վերաբերյալ, ընդունում են դիմումներ, ստեղծում են հանձնաժողովներ և կազմակերպում հարցազրույցներ: Նրանք կապի մեջ են ՄՄԾ-ի հետ թափուր աշխատատեղերի համար: Աշխատանքի ընդունվելուց հետո նրանք անցնում են 3-ամսյա փորձաշրջան: Կա պարտադիր երկու շաբաթյա լիարժեք ուսուցում գերմանական ձեռնարկով, այնուհետև ընդհանուր 3 ամիս՝ գրքում ընդգրկված լիարժեք սովորելու համար: Սա հիմնականում աշխատանքային ուսուցում է՝ այլ խնամակալների և բուժքույրերի հետ միասին սովորելու, գիտելիքներ ձեռք բերելու պրակտիկա:

Վերջերս ստեղծված խնամքի մեկ այլ հաստատություն է Ներառական դպրոցը/դպրոցները, որոնք ընդգրկում են հաշմանդամություն ունեցողներին իրենց սովորողների շարքերում, մինչդեռ նախկինում նրանք առանձին էին: Յուրաքանչյուր դասարան/ուսուցիչ ունի մեկ օգնական (ով նաև ուսուցիչ է հատուկ ծանրաբեռնվածությամբ)՝ սովորողների հետ աշխատելու համար:

Այս ամենը ցույց է տալիս, որ բարելավման փորձնական ծրագրի իրականացման համար կան հետաքրքրություններ և հնարավորություններ սանիտարական ծառայությունների մասով՝ երկրի առողջապահության բոլոր ոլորտներում՝ հատկապես վերապատրաստման հնարավորությամբ: Կան հաջողված դեպքեր (օրինակ «Կարիտաս»), որտեղ համապատասխան մարմինները նպաստել են օգնության ծառայությունների ստեղծմանը և անձնակազմի վերապատրաստմանը: Այնուամենայնիվ երկրում կա ընդհանուր ընկալում այն մասին, որ արագ զարգացող հասարակության մեջ ավելի շատ մասնագիտական ծառայություններ են անհարժեշտ և տեղական իշխանությունները պարտավորվել են աջակցել այս գործընթացին:

Այցի ավարտին երևանում կայացած «Միասնական սոցիալական ծառայության» հետ եզրափակիչ հանդիպումը շատ բովանդակալից էր և տեղին: Նրանք գնահատեցին IMPROVET-ի դերը երկրում՝ առողջապահական ծառայության ուժեղացման առումով, և հաստատեցին, որ քոլեջներում համապատասխան համակարգ, գործիքներ և ռեսուրսներ



**Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից**

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

չլինելու դեպքում, միջազգային կազմակերպությունները կարող են իրականացնել ուսուցում՝ հատկապես կարճաժամկետ:

6.3 Ֆոկուս խմբային քննարկումների արդյունքները

Հիմնական շահագրգիռ կողմերի հետ տեղի ունեցած առաջին ֆոկուս խմբային քննարկումը շատ տեղեկատվական և օգտակար էր հայկական սոցիալական համատեքստը հասկանալու համար: Մինչ ընտանիքի խնամքի ավանդական համակարգը դեռ գերիշխում է և հատուկ կարիքներով մարդիկ (հատկապես տարեցները) նախընտրում են, որ իրենց խնամեն հարազատները իրենց իսկ տանը, սոցիալական մոդելը զարգանում է (աշխատող կանանց, մասնավոր հատվածի ընդլայնման պարագայում): Մյուս կողմից, ընդհանուր առմամբ, խնամքին վերաբերող մասնագիտությունները այնքան էլ զրավիչ չեն համարվում հատկապես երիտասարդների համար, նմանօրինակ աշխատանքների նկատմամբ ընդհանուր առմամբ հետաքրքրությունը քիչ է:

Թեև այս համատեքստը ըստ էության մարտահրավեր է, բայց բազմաթիվ հնարավորություններ է ստեղծում նոր ցուցանիշների մշակման, եղանակների կատարելագործման և երկրում առողջապահական համակարգի ընդհանուր վերանայման և արդիականացման համար:

Գյումրու պետական բժշկական քոլեջի անձնակազմի և տեղի հիվանդանոցների, կլինիկաների անձնակազմի հետ տեղի ունեցած ֆոկուս խմբային հանդիպումները մեծապես հաստատեցին հարցաթերթիկներով հավաքագրված տվյալների հավաստիությունը:

Ինչ վերաբերում է առողջապահական դասընթացներին, ապա քոլեջում կա միայն մեկ կարճաժամկետ դասընթաց տարեցների խնամքի վերաբերյալ, սակայն ուսանողների կողմից այն չունի մեծ պահանջարկ (250 ժամ 3 ամիս): Պատճառներից մեկն այն է, որ Հայաստանում բժշկական հաստատություններում նման գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ չէ դիպլոմ ունենալ: Առաջարկվում է նախարարություններին և ՄՍԾ-ին բարձրացնել նման մասնագիտական վերապատրաստման անհրաժեշտությունը: Տնային խնամքի ուսուցումը իրականացվում է միայն Կարիտասի կողմից, իսկ դասընթացի ավարտին տրամադրվում է նաև վկայական:

Ինչ վերաբերում է ՄԿՈՒ **պետական** քոլեջների աշխատանքին, նրանք չունեն ֆինանսական ինքնավարություն և չեն կարող վարձել ուսուցիչներ, վերապատրաստողներ, միայն ադմինիստրատիվ անձնակազմ: Դասախոսները աշխատանքի են ընդունվում միայն մրցութային կարգով: Գոյություն ունի խորհուրդ կազմված ուսանողներից, դասախոսներից, արհմիություններից և այլն: Բոլոր ֆինանսական որոշումները պետք է ընդունվեն քոլեջի Կառավարման խորհրդի կողմից:



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմի

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

խոցելի խմբերը և սոցիալապես անապահով ընտանիքները աջակցություն են ստանում ինչպես պետության, այնպես էլ քոլեջի կողմից:

Ինչ վերաբերում է քննություններին՝ դասընթացների ավարտին, քննությունների ժամանակ կազմվում է հանձնաժողով, որում ընդգրկվում են բժիշկներ, բժշկական կենտրոնի ղեկավար, տեղի դասախոսներ և այլն:

Ինչ վերաբերում է ներառական կրթությանը, հատուկ ուշադրություն է հատկացվում հատուկ կարիքներով (մատների բացակայություն և այլն) ուսանողների հետ ուսուցմանը, բայց չկա նախատեսված հատուկ ուսուցում: Քոլեջում չկա թափոնների կառավարում և կայունություն կանաչ կրթության ապահովման հարցում: Կան հատուկ կազմակերպություններ, որոնք զբաղվում են հատուկ իրերի հավաքագրմամբ, որոնք կարող են վերամշակել: Դրանցից մեկը զբաղվում է դեղորայքի վերամշակմամբ:

Անհրաժեշտության դեպքում նրանք կարող են բարելավել հետևյալը ուղղությունները

1. Դեղամիջոցների դոզավորման ուսուցում
2. Հաղորդակցման հմտություններ

Ինչ վերաբերում է քաղաքում գործող հիվանդանոցներին և կլինիկաներին, նրանք ունեն խնամողներ, սանիտարներ, ովքեր կատարում են հիմնական առաջադրանքներ և կերակրում են հիվանդներին: Նրանք պարբերաբար անցնում են դասընթացներ Կարմիր խաչի կողմից տարեկան 5-6 անգամ, 3-5 օր համապատասխան մասնագետի կողմից: Դասընթացի հիմնական թեմաներն են՝ Մի վնասիր հիվանդներին, Մի վնասիր ինքդ քեզ: Անհրաժեշտության դեպքում նրանց ուղարկում են վերականգնողական կենտրոններ՝ լրացուցիչ վերապատրաստումներ անցնելու համար:



**Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմի**

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

7. SWOT վերլուծություն

Վերոհիշյալ բոլոր բացահայտումները և տվյալները կարող են ամփոփվել հետևյալ SWOT վերլուծության մեջ:



Գծապատկեր 8. Բացահայտումների և տվյալների ամփոփիչ SWOT վերլուծության



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

8. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՏԱՄՆԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾ

Մեր բացահայտումները հստակ ցույց են տալիս, որ ուսուցման մակարդակը չի բավարարում շուկայի պահանջները. այն չափազանց ցածր է ընկերությունների պահանջները բավարարելու համար: Մեր եզրակացությունը միանշանակ է. բացարձակապես անհրաժեշտ է բարձրացնել ուսուցման մակարդակը, որպեսզի սովորողներն իրենց կրթությունն ավարտելուց հետո կարողանան ինքնուրույն ինտեգրվել ատամնաբուժական պրոթեզավորման լաբորատորիայում՝ առանց հավելյալ վերապատրաստման համար վճարելու:

Մենք առաջարկում ենք հետևյալ փոփոխությունները, որոնք կուժեղացնեն կրթական ծրագրերը և ավելի ճկուն կդարձնեն դրանք, ինչպես նաև կմոտեցնեն կրթությունը դաշտի կարիքներին:

Ուսումնական ծրագրերի համապատասխանեցում. 2-րդ և 3-րդ կուրսերի համար գործող ծրագրի համապատասխանեցում արտադրական գործընթացների ներառմամբ և ժամերի/մոդուլների համապատասխանեցմամբ: Դրա համար պետք է ապահովել բովանդակային և իրականացման շրջանակ/ կառուցվածք: Այս ծրագրային համապատասխանեցումը կվերաբերվի և՛ CEPFA-ին, և՛ «Գյուլմրու պետական բժշկական քոլեջ»-ին:

Կարողությունների զարգացում դասախոսների համար. Դասախոսների կարողությունների զարգացմանը միտված միջոցառումներ՝ հատուկ ուշադրություն դարձնելով նոր նյութերին, սարքավորումներին, թվային ծրագրերին, կազմակերպելով աշխատարաններ, աջակցելով թվային ուսուցմանը և նորարարական մանկավարժական մոտեցումներին, ինչը կհարստացնի դասավանդման փորձառությունը:

Շուկայի պահանջները բավարարելու նպատակով մենք առաջարկում ենք ստեղծել մեկ լրացուցիչ տարվա դասընթաց, որը կազմված կլինի ոչ պարտադիր մոդուլներից, որոնք սովորողները կարող են ընտրել ելնելով իրենց հետաքրքրություններից: Այս բաղադրիչը վերաբերում է CEPFA-ին:

- ✓ **Մոդուլային կառուցվածք.** Լրացուցիչ տարին կազմված կլինի ֆակուլտատիվ մոդուլներից ոչ բոլորի համար պարտադիր, ինչը թույլ կտա և սովորողներին և գործող մասնագետներին ստանալ կրթություն իրենց հետաքրքրող հմտություններից:
- ✓ **Ուսման վարձ և դասավանդում.** Մոդուլները լինելու են վճարովի, ուսման վարձը վճարելու են սովորողները, դասընթացն իրականացվելու է ոլորտի գործող մասնագետների կողմից:
- ✓ **Գործող մասնագետների աշխատավարձ և աշխատանքային ժամանակացույցը.** Ուսումնական հաստատությունը վճարելու է գործող



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

մասնագետների աշխատավարձը: Ոլորտի գործող մասնագետները անցկացնելու են դասընթացը իրենց հարմար գրաֆիկով, որը կարող է լինել փոփոխական և տևել 1 օրից մինչև մի քանի օր: Դասընթացի ժամերից դուրս վերապատրաստվող անձը շարունակում է իր աշխատանքը աշխատավայրում, որպես գործող մասնագետ:

Առաջարկվող մոդուլներն են.

- ✓ Համակցված պրոթեզավորում աթաշմենով (կաահմանվի)
- ✓ Ատամների կերամիկական պրոթեզավորում
- ✓ Ցիրկոն
- ✓ CAD/CAM
- ✓ Իմպլանտների պրոթեզավորում

Վկայականի տրամադրում. մեկ լրացուցիչ տարվա դասընթացի ավարտին մասնակիցների վկայականի շնորհումը տրամադրվում է հանձնաժողովի կողմից, որի անդամներն են լինելու ատամնաբույժներ, ատամնատեխնիկներ և դասավանդողներ: Այս վկայականը պետք է շնորհվի միայն այն դեպքում, եթե թեկնածուն արձանագրել է բարձր արդյունքներ: Սրանով ապահովված կլինի որակավորման բարձր մակարդակը:

Ծրագրի պիլոտավորում. մենք կարծում ենք, որ Երևանում գտնվող CEPFA-ն ծրագրի գործընկեր Հովակիմյան Լաբ պրոթեզավորման լաբորատորիայի հետ միասին պետք է լինի փորձնական ուսումնական կենտրոնը, որը կիրականացնի այս նորարար ծրագիրը: Այս նախաձեռնությունը կապացուցի մեր կողմից ստանձնած պատասխանատվությունը հզորացնել գործող մասնագետների և սովորողների հմտությունները, ինչը կարողարացնի բոլորի ակնկալիքները՝ սովորողների, ուսումնական կենտրոնների, ընկերությունների և աշխատաշուկայի:




Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

9. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ԽՆԱՄՔ

9.1 Արժեքային մոդելի հիմքը - Առողջապահական համակարգ

Գծապատկեր 9. Արժեքի մոդելի հիմքը - Առողջապահական համակարգ



Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմի

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

9.2 Առողջապահություն որոշ առաջարկություններ




1 –Առողջապահական ոլորտի մասնագետների արժևորում (գնահատում).

- զարգացնել հմտությունները մեծահասակներին ուսուցանելու մեջ
- զարգացնել հմտությունները հատուկ ոլորտներում (հատուկ կարիքներ ունեցող մարդկանց հետ աշխատելիս)
- որոշել, թե որ հիմնական բուժքույրական առարկաները կարելի է նվազեցնել և հարմարեցնել սանիտարների ուսուցմանը:



2- Զարգացնել մարդակենտրոն խնամքի մշակույթը.

- դասընթացներ, որոնք վերաբերում են խնամքին
- դասընթացներ, որոնք վերաբերում են առողջապահական աշխատողի մոտիվացիային՝ անվտանգություն, սթրեսի կառավարում, հյուծում (բըրնաութ) և թիմային աշխատանք
- զարգացնել հմտությունները հատուկ հիվանդների խմբերի հետ աշխատելիս



3 – Զարգացնել մոդուլային դասընթացները

- բարելավել դասընթացներ կառուցվածքը, որոնք արդեն առկա են Հայաստանի և Իտալիայի ուսումնական հաստատություններում
- դասընթացներ, որոնք կարող են առաջարկվել տարբեր նպատակային խմբերին՝ ըստ փորձնական ծրագրերի արդյունքների և կարիքների
- դասընթացներ, որոնք տարածում են եվրոպական արժեքներն ու սկզբունքները և զարգացնում են խնամքի իրավունքի շուրջ անդրադարձը վերջին տարիներին:



4 – Զարգացնել հաղորդակցության ռազմավարություններ մեծահասակների ուսուցումը իրականացնելու համար

- բացատրել վերապատրաստման (և/որ հմտություններ) կարևորությունը մեծահասակների համար (աշխատանքի հնարավորություններ, անձնական բավարարվածություն)
- բերել մեծահասակների վերապատրաստման լավագույն փորձի օրինակներ



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմի

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

- մոտիվացնել նոր վերապատրաստվողներին մասնակցել առաջարկվող դասընթացներին



5 – Շարունակել զարգացնել համագործակցությունը հաստատությունների և ընկերությունների հետ՝ ստեղծելու և կառուցելու ուսուցում, որը երկարտև է և հարմարեցված է տեղական աշխատաշուկային:

9.3 Հիվանդակենտրոն խնամքի մոդելներ

ՀԻՎԱՆԴԱԿԵՆՏՐՈՆ ԽՆԱՄՔԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ



Գծապատկեր 10. Հիվանդակենտրոն խնամքի առաջնային դրույթները


Հաստատություններ.



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմի

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Անձնական խնամողի և ատամնատեխնիկական հմտությունների բացերի վերլուծություն և առաջարկություններ




Գծապատկեր 11. Հիվանդակենտրոն խնամք- Հաստատություններ Մարդկանց հետ.



Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմի

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:



Գծապատկեր 12. Հիվանդակենտրոն խնամք- Մարդկանց հետ



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմի

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

9.4 Առաջարկվող թեմաներ և մոդուլներ

Վերոնշյալ բոլոր վերլուծությունների արդյունքում առաջարկվում է կենտրոնանալ դասընթացավարների վերապատրաստման հետևյալ մոդուլների վրա.

ՀԻՄՆԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐ	Առողջություն և անվտանգություն, անձնական հմտություններ	Խնամք	Տեսական և գործնական հմտություններ
1 ՄՈԴՈՒԼ. Օգնության տրամադրում կյանքի տարբեր փուլերում -հիմնական	առողջության և անվտանգության հիմունքներ	խնամքի հայեցակարգ (ինքնախնամք, ուրիշի խնամք) անձնական մոտիվացիաներ և նախորդ փորձեր հաղորդակցության հմտություններ և թիմային աշխատանք տարբեր միջավայրերում՝ հիվանդանոց, խնամքի տուն	Սննդի և անձնական հիգիենայի պրակտիկաներ Հագնվելու օգնություն (հարդարանք) Մահճակալի և անվասայլակի տեղափոխություն
2 ՄՈԴՈՒԼ. Օգնություն կյանքի տարբեր փուլերում -Ընդլայնված	առողջություն և անվտանգություն առողջապահական հաստատություններում (հիվանդանոց)	Հաղորդակցություն հիվանդի ընտանիքի հետ Հյուծման (բըրնաութ) կանխարգելում	Արտակարգ իրավիճակ հետվիրահատական խնամք, ծանր հիվանդների խնամք
3 ՄՈԴՈՒԼ. Տարեցներ	անվտանգ վարքագիծ տարեցների նկատմամբ (հատկապես տեղաշարժի ժամանակ)	Ծերացման հայեցակարգ և երկարատև խնամքի օգնության կարիք ունեցող տարեցների իրավունքների և պարտականություննե րի եվրոպական խարտիա	Տարեց մարդիկ և նրանց հետ վարվելու հիմնական մեթոդները



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմի

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

		Տարեցների հետ հաղորդակցման հմտություններ	
4 ՄՈԴՈՒԼ: Հաշմանդամներ	Անվտանգ վարքագիծ հաշմանդամների նկատմամբ (հատկապես տեղաշարժի ժամանակ)	Հաշմանդամության և Միավորված Ազգերի Կազմակերպության (ՄԱԿ) խարտիայում նշված հաշմանդամության իրավունքի հայեցակարգ Ներառականության հայեցակարգ	Հաշմանդամության հիմնական մոդելներ (բժշկական/սոցիալակ ան) Հաշմանդամների աջակցման ռազմավարություն
5 ՄՈԴՈՒԼ: Մտավոր խնդիրներ ունեցող մարդիկ	Անվտանգ վարքագիծ մտավոր խնդիրներ ունեցողների հետ (հաղորդակցման ժամանակ) առողջապահական աշխատողի անձնական հոգեկան հավասարակշռության պահպանման ռազմավարություն	Եվրամիության(ԵՄ) համապարփակ մոտեցումը մտավոր ունեցողների առողջությանը Բոլոր տարիքի մարդկանց մտավոր առողջության պահպանման գործողությունների դիտարկում .	Մտավոր խնդիրների հիմնական մոդելներ (բժշկական/սոցիալակ ան) Մտավոր խնդիրներ ունեցող անձանց աջակցման ռազմավարություն

Աղյուսակ 1. Առաջարկվող թեմաներ և մոդուլներ


Հետևյալ աղյուսակը ներկայացվել է պարզելու համար, թե ինչպես պետք է կազմակերպել ուսուցումը (ուժ հետ, որտեղ, ուժ կողմից և այլն): Աղյուսակները ամփոփված են երեք հնարավոր տարբերակներով՝ **Տարբերակ 1**, **Տարբերակ 2** և **Տարբերակ 3**:



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմի

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Անձնական խնամողի և ատամնատեխնիկական հմտությունների բացերի վերլուծություն և առաջարկություններ



Աղյուսակ 2. Ուսուցման կազմակերպում



Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմի

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Տարբերակ 1

Վերջնական տարբերակ	Առաջարկել սանիտարներին ձեռք բերել նոր հմտություններ, մարդկանց խնամքի կազմակերպման ավելի լավ միջոցներ՝ նվազագույնի հասցնելով ռիսկերն ու սխալները
Շահառուներ	Աշխատող սանիտարներ, որոնք գրանցված են իրենց գործատուի կողմից (խնամքի տներ, հիվանդանոց)
Դասավանդողներ	Մոդուլները կդասավանդվեն ՄԿՈՒ մասնագետների կողմից (Գյումրու պետական բժշկական քոլեջ (GSMC))
Տևողությունը	Դասընթացը կլինի պարտադիր և կկազմակերպվի աշխատանքային ժամերին: Դասընթացի տևողությունը կքննարկվի ընկերությունների հետ:
Տեղը/ժամանակը	Այն կկազմակերպվի ՄԿՈՒ քոլեջներում(Գյումրու պետական բժշկական քոլեջ(GSMC), Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամ(CEPFA))
Լրացուցիչ նշումներ	

Տարբերակ 2

Վերջնական տարբերակ	Առաջարկել առողջապահական օգնության բարձրորակ ուսուցում ստանալու հնարավորություն (ուսանողները կարող են հնարավորություն ունենալ աշխատել խնամքի տներում, հիվանդանոցներում, մասնավոր ընկերություններում)
Շահառուներ	Գործազուրկներ, որոնք գրանցված են Միասնական սոցիալական ծառայությունների կողմից: Առողջապահական օգնության ոլորտում փորձ ունեցող աշխատողներ(սանիտարներ, խնամակալներ), ովքեր ցանկանում են լրացուցիչ ուսուցում ստանալ
Դասավանդողներ	Մոդուլները կդասավանդվեն բուժքույրերի կողմից/ՄԿՈՒ մասնագետներ
Տևողությունը	Քննարկման փուլում է
Տեղը/ժամանակը	Այն կկազմակերպվի ՄԿՈՒ քոլեջներում



**Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմի**

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Լրացուցիչ
նշումներ

Որոշ գործնական դասեր, փաստահավաք այցելություններ,
պրակտիկաներ կարող են կազմակերպվել ընկերությունների կողմից

Աղյուսակ 3. Առաջարկվող տարբերակներ՝ Տարբերակ 1 և Տարբերակ 2

Տարբերակ 3

Դասընթացավարների ուսումնական մոդուլները կարող են տրամադրվել ինչպես ՄԿՈՒ մասնագետներին, այնպես էլ բուժքույրերին, որից հետո նրանք կկարողանան վերապատրաստել արդեն աշխատող սանիտարներին կամ գործազուրկներին: Ընկերությունների և ՄԿՈՒ կենտրոնների հետ հետագայում տեղի կունենան գործնական մանրամասնությունների քննարկումներ՝ որոշելու համար յուրաքանչյուր մոդուլի համար նախատեսված ժամերը, մեթոդները, դասավանդման նյութերը և այլն:



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Փաստաթղթեր	Աղբյուրը կամ Հղումը/Գտնվելու վայրը
Հավելված 1 ՄԿՈՒ կենտրոնների հարցաթերթիկ	https://drive.google.com/drive/folders/1q9jaCxDLXzKeFrVYhdIFAqFKC9Fk3Lxf
Հավելված 2 Մասնավոր հատվածի/ հիվանդանոցների հարցաթերթիկ	https://drive.google.com/drive/folders/1vJRlswCXd8GRUuLCtnjPn46O8_uYbbh8
Հավելված 3 Շահագրգիռ կողմերի համար հարցաթերթիկ	https://drive.google.com/drive/folders/1mbmzghhoHLcAMc9Q9-nPMI xYAbw6ykMI
Հավելված 4 Ֆոկուս խմբերի գործիքակազմ ՄԿՈՒ կենտրոններ	https://drive.google.com/drive/folders/1ynegJxBOfovWhjXk9M_D8hsG_UDhZr9e
Հավելված 5 Ֆոկուս խմբի գործիքակազմ Մասնավոր հատված/հիվանդանոցներ	https://drive.google.com/drive/folders/1RH--0aKaakhvZz6t-IPoVkfP9yL4v26e
Հավելված 6 Ֆոկուս խմբի գործիքակազմ Շահագրգիռ կողմերը	https://drive.google.com/drive/folders/1jFI6USrgalT4WzmZKa4_TYA H7h92KabE
Հավելված 7 Հարցազրույցի ուղեցույցներ	https://drive.google.com/drive/folders/1SYvQoyxk5ayejAgM6mMyA97n1ZvcktSh
Հավելված 8 Ճանաչողական այցի օրակարգ	https://drive.google.com/drive/folders/11loPO29OK8Ap8y8kSSPC3A KcKFernNs
Հավելված 9 Հայտարարություններ	https://drive.google.com/drive/folders/1e3uZnGTeiO58UQDQHRqkFBobW9rTq9-9



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Հղումներ

- Burzio, Cristiana. (նոյեմբեր 2023): Կրթության, վերապատրաստման և զբաղվածության ոլորտներում քաղաքականության հիմնական զարգացումները – Հայաստան 2023. Եվրոպական կրթական հիմնադրամ (ETF).
- Հայաստան - Թուրինի գործընթացի ազգային զեկույց 2018-2020 թթ. Վերցված է Թուրինի գործընթացի 2018-2020 Հայաստանի ազգային զեկույցից:
- Եվրոպական կրթական հիմնադրամ. (նոյեմբեր 2023): Թուրինի գործընթացի մակարդակ 2. Հայաստանում ցկյանս ուսուցման քաղաքականության ամփոփում 2023 թ. Վերցված է ETF-ից:
- Եվրոպական կրթական հիմնադրամ. (2024). Թուրինի գործընթաց. Հայաստանում ցկյանս ուսուցման քաղաքականության վերանայում – 2024 թ.
- ՀՀ օրենքը մասնագիտական կրթության և ուսուցման մասին- 2024թ.



Համաֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար: